



### ՕՊԵՅՏ ՊԻԵԼՈՌՈՒՍԻԱ ԵՒ ՂԱԶԱԽՍԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ՀՐԱԵՐՆԵՐ ՍՏԱՅԱԻ

Արտաքին գործոց և արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ժան Օպեյտ երկու անգամ պաշտօնական այցելութեան երկու հրաւերներ՝ պիւրոնու և Ղազախի իր պաշտօնակիցներէն:

Պիւրոնուի այցելութեան հրաւերը Օպեյտի փոխանցեց Գամասկոս մնացող Պիւրոնուի Լիբանանի դեսպանը: Ան Օպեյտի հետ քննարկեց տեղական և շրջանային հարցեր և աւելցուց, որ Պիւրոնուի մէջ Պիւրոնուի դեսպանատան բացման յապաղումի պատճառները նիւթական և տնտեսական են:

Երկրորդ հրաւերը Օպեյտի փոխանցեց Գահիրէի մէջ Ղազախստանի դեսպան Պաղտատ Ամերիէ: Հանդիպումին քննարկուեցան Լիբանան - Ղազախստան երկկողմանի յարաբերութիւնները:

### «ՀԱՆԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ» ՊԼՈՔԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

«Հանատարմութիւն Դիմադրութեան» Դիմադրութեան անկախ փոխադրութեան փորձը երկու դրոշմաւոր Պալատէք - Հերմէլը և Աքքարը նահանգներու վերածարմար իրութեան և իր հրապարակած պաշտօնական հաղորդագրութեան մէջ նշեց, որ այս երկու նահանգներուն յատուկ քարտեզներու վարչական կարեւոր քայլ մը, որ պէտք է ամբողջացուի շարք մը միջոցառումներով, որ պէտք է նշեալ շրջաններուն մէջ գործադրուին բարգաւաճման և վերաշինութեան խնամարարութեան օրակարգները:

**TANIA TRAVEL**  
Sodeco Square - Rue Damas  
Tel: (01) 616555 (pbx) - Fax: (01) 616561  
Rue Sidani - Face cinema Jeanne d'Arc  
Tel: (01) 739662 (pbx) - Fax: (01) 340473  
Website: http://www.taniatravel.com

**CHARTERS ARMENIE**  
Programme avec Tours (7 et 8 jours)

**ATHENES**  
RHODOS, MYKONOS, CORFU & CRETE  
Croisières vers les îles Greques

**RHODES** (8 jours)  
Départs tous les Mardis à partir du 15/07

**PARIS+COTE D'AZUR**  
Avion + Grand choix d'Hôtels en B/B  
Possibilité d'estacion à Lourdes, EuroDisney...

**ITALIE** (du Nord et du Sud)  
10 Programmes différents (8 à 15 jours)

**AUTRICHE**  
Différents programmes, Hôtels, Tours

**ESPAGNE, PORTUGAL et MAROC** (Villes Impériales)  
10 Programmes différents (8 à 18 jours)

**EGYPTE**  
Le Caire & Croisière sur le Nil-Louxor & Assouan  
Sharm el Sheikh, Hurghada, Alexandrie

**CIRCUIT TUNISIE**  
Sousse & Hamamat

**MALAISIE & THAILANDE**  
Différents programmes (Tours originels)

**POSSIBILITES DE CREDIT**  
Jal-el-Dib: 710305/67, Joumhour: 913746/934466  
Bikfaya: 982040, Kailli: 218821/213321  
Jbel: 942744/943388, Zahia: 806947/802592  
Saïda: 730870/736870, Tripoli: 627755/602469  
Amioun: 990075

**Orient plus**  
KHABAZ TRAVEL & TOURISM

**Jarna \$319**

8 days - Direct Charter Flight  
Every Tuesday starting from 8 July

**Other Destinations**  
Boat Trip to Cyprus 3 Days  
Cyprus & Greece  
**\$190 \$425**

BOOK THIS WEEK AND GET 15% DISCOUNT  
ASK FOR OUR FREE CREDIT FACILITIES

**01.900598, 901598**  
**03.258336, 256254**  
**www.orientplus.com**

## ԽԱՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԵՒ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ՍԵՆՏԻՔԱՅԻ ՆԱԽԱԳԱՎՆԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՍՕՏ

Տեղեկատուութեան նախարար Միշէլ Սրմազա երէկ ընդունեց խմբագիրներու և լրագրողներու սենտիքաներու նախագահներ Մըլհէմ Քարամը և Մոհամէտ Պալապէքին, որոնց հետ քննարկեց տեղեկատուութիւնը յուզող հարցեր:

Հանդիպումին, Սրմազա պատրաստակամութիւն յայտնեց զօրակցելու խմբագիրներու և լրագրողներու սենտիքաներուն ու տեղեկատուութեան նախարարութեան միջև կարգաբեկումներու բարելաման և շեշտեց, որ ամէն ճիշդ գործ պիտի ընէ ամբողջովը համար երկրին մէջ խօսքի ազատութիւնը, ինչպէս նաև լրագրութեան և լրագրողներուն ապահովութիւնը:

Իրենց կարգին, Քարամը և Պալապէքի յայտնեցին, որ տեղեկատուութեան



մարզը շատ պահանջներ ունի և ընդգծեցին Սրմազայի հետ գոյութիւն ունեցող լաւ յարաբերութիւնները և անոր անհրաժեշտութիւնը:

Հանդիպումին ընթացքին որոշուեցաւ նման հանդիպումներ յաճախ կայացնել՝ քննարկելու և յստակացնելու տեղեկատուութեան մարզին առընդէմ թղթածրարները, ինչպէս նաև անոր պահանջները:

Սրմազա ընդունեց նաև Լիբանանի մէջ Մարոքի, Աւստրիոյ և Նորվեգիոյ դեսպանները, ինչպէս նաև Արաբական Միացեալ Էմիրութիւններու տեղեկատուութեան հաստատութեան ընդհանուր տնօրէն Ահմէտ Ալի Պալլուշին, որոնց հետ քննարկեց երկկողմանի յարաբերութիւնները և զանոնք բարելաւելու հետևանքները:

### ՄԱԶՈՒԹՈՎ ԲԱՆՈՂ ՎԱՆԵՐՈՒ ՀԱՐՅԸ ԴԱՐՁԵԱԼ ԿԱՐԾԱՐԾՈՒԻ

Աշխատաւորական Ընդհանուր Համադաշնակցութեան փոխ նախագահ Պասսամ Թալապի երէկ համադաշնակցութեան կեդրոնատեղիին մէջ տուաւ մամուլի ասուլիս մը, որուն ներկայ գտնուեցան համադաշնակցութեան նախագահ Ղասսան Դըսըն, ցամաքային փոխարտութեան պատասխանատու վարորդներու սենտիքաներու նախագահ Ապտիլ Էմիր Նաֆիսը և վարորդներ:

Ասուլիսին ընթացքին Թալապի շեշտեց, որ համադաշնակցութիւնը և ցամաքային փոխարտութեան սենտիքաները կառուցած կը մնան մագրութիւն բանող վաներու և վարորդներու հարցեր լուծել բանակցութեանց և շինիչ երկխօսութեան ճամբով, միշտ նկատի ունենալով ազգային շահերու ապահովումը:

Իր կարգին, Դըսըն ընդգծեց, որ համադաշնակցութեան պահանջները կը նոյնանան վարորդներու պահանջներուն հետ, բաւարարուելով միայն օրապահիկի ապահովութեամբ:

### ՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

● ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ և առեւտուրի նախարար Մարուան Համատէք երէկ ընդունեց Լիբանանի մէջ Հունգարիոյ դեսպան Պալ Ֆապիէն, որուն հետ քննարկեց Լիբանան - Հունգարիա առեւտրական և տնտեսական երկկողմանի յարաբերութիւնները և գանձեց բարելաւելու հետևանքները, յատկապէս Եւրոպական Միութեան Հունգարիոյ անդամակցութեան հետ:

● ԿԵՆՏՐՈՆԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ Ֆարուք Պուէյզ երէկ Բապիէի «Ա. Թ. Ս. Է. Է.» ակումբին մէջ բացումը կատարեց «Լիբանանեան ծովագնացութեան ընդհանուր կայան» կայ գտնուեցան պետական նախարար Խալիլ Էլ-Քալի, Ֆարուքի Գահիրէի, Լիբանանի մէջ բարգաւաճման ծրագիրներու ՄԱԿԻ ներկայացուցիչ Իվ Տոսան և բարձրաստիճանային անձնակազմի անդամներ:

● ՈՒՍՏԱՆԻ ԵՒ ԵՐԵՎԱՆԻ Հարցերու նախարար Ալլուայ Հրմայէտ երէկ ընդունեց երեսփոխան Անդուան Հատատը, որուն հետ քննարկեց Մեծի կարիքները, յատկապէս Ղուրի և երկարակատուութեան հոսանքի հայթայթման գծով:

● ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ նախարար Ալի Հասան Խալիլ երէկ ընդունեց բարգաւաճման և վերաշինութեան խորհուրդի փոխ նախագահ Քարիմ Եսպիէն, որուն հետ քննարկեց Մեծի կարիքները և վերաշինութեան հոսանքի հայթայթման գծով:

● ԿՐԹՈՒԹԵԱՆ և բարձրագոյն ուսման նախարար Սամիր Ժալըլ երէկ ընդունեց Լիբանանի մէջ Աւստրալիոյ և Հոլանտայի դեսպանները: Քննարկուեցին առարկայ դարձան Լիբանան - Աւստրալիա և Լիբանան - Հոլանտա երկկողմանի յարաբերութիւնները և կրթական մագրութեան ներքինացման անհրաժեշտութիւնը:

● ՆԵՐՔԻՆ Ապահովութեան ուժեր երէկ Լեռնա-ՄԱԿԻ ներկայացուցիչ Իվ Տոսան և բարձրաստիճանային անձնակազմի անդամները հարցերու նախարար Ալլուայ Հրմայէտ երէկ ընդունեց երեսփոխան Անդուան Հատատը, որուն հետ քննարկեց Մեծի կարիքները, յատկապէս Ղուրի և երկարակատուութեան հոսանքի հայթայթման գծով:

● ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ նախարար Ալի Հասան Խալիլ երէկ ընդունեց բարգաւաճման և վերաշինութեան խորհուրդի փոխ նախագահ Քարիմ Եսպիէն, որուն հետ քննարկեց Մեծի կարիքները և վերաշինութեան հոսանքի հայթայթման գծով:

Վարչապետ Հարիրի այցելեց նաև Պէյրութի մէջ «Ա. Է. Ֆ. Փէ» լրատու գործակալութեան նախկին տնօրէն Փասթայ Մալիէն:

### «ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»Ի ՎԱՂՈՒՄ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30 Լիբանանեան մամուլի խորհուրդի ընթերցում՝ արաբերէն  
9:30 Զաղաքական լուրեր/ հայերէն  
10:00 Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարէն Ս. պատարագի ուղղակի ձայնագրում  
12:30 Զաղաքական լուրեր/ հայերէն  
1:00 Ազգային - յեղափոխական երգեր  
2:30 Զաղաքական լուրեր/ արաբերէն  
2:45 Յունարեւ երգերու ունկնդրութիւն  
4:30 Զաղաքական լուրեր/ արաբերէն  
6:00 «Զաղաքական հորիզոն» ընթացիկ շաբաթուաթիւի զարգացումներու ներկայացում՝ վերլուծական մտայնումով  
6:30 Զաղաքական լուրեր/ հայերէն

**RAFCO**  
Water Technology

Water Filters & Treatment  
Swimming Pools Equipment  
Water Pumps  
Industrial Filters  
Water Coolers

purex  
triton  
Filter Systems

DOULTON  
Sterilight

Showroom: Autostrade Dora Tel.: (01) 242200, 742231, 345598

### ՔԱՐԱՅԱՏՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒ ՈՐՈՇՈՒՄԻՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԻ ՑՈՅՅԵՐ

Սայտայի մէջ քարահատման վայրերու սեփականատէրեր, կապալառուներ, երկրաչափներ, շինարարական աշխատանքի յատուկ նիւթերու առեւտրականներ և բազմաթիւ աշխատաւորներ երէկ կատարեցին ցոյց մը Սայտայի առեւտուրի և ճարտարապետութեան դրասենեակի կեդրոնատեղիին առջև:

Ցոյցին մասնակցեցան երեսփոխաններ Ուսամ Սաատ, Նեգիհ Մանուէր և Ժորժ Նաֆի, գրասենեակի նախագահ Մոհամէտ Զապիթի և կապալառուներու սենտիքայի փոխ նախագահ Ռաֆիք Զապիթի:

Ցուցարարները պահանջեցին կառավարութենէն քարահատման վայրերու փակման որոշումը վերատեսուելու և նիւթերու:

Ապա անոնք ուղղուեցան Մասլէհ, տեսակցելու համար խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի հետ և շրջաբերականներ ղրկեցին նախագահ զօր. Էմիլ Լահուտի և վարչապետ Ռաֆիք Հարիրիի՝ պահանջելով վերատեսուելու և նիւթերու նշեալ որոշումը և լրջօրէն քննարկել քարահատման թղթածրարը:

### ՍԵՆՏԻՔԱՅԱԿԱՆ ՎԱՆԴՊՈՒՄ

Միւս կողմէ, կապալառուներու, երկրաչափներու, ազատ առեւտուրի սեփականատէրերու, ճարտարագէտներու և երկրագործներու սենտիքաներու ներկայացուցիչներ երէկ Սայտայի մէջ ընեցան սենտիքայական հանդիպում մը, որուն ընթացքին կող ուղղեցին իշխանութեան երեք պետներուն՝ վերատեսուելու և նիւթերու կառավարութեան որոշումը և արդար ու յստակ ծրագիր մը մշակել Լիբանանի բոլոր նահանգներուն մէջ գտնուող քարահատման վայրերուն համար:

Հանդիպումին ետք պատուիրակութիւն մը այցելեց երեսփոխան Ալի Պեգիլի, որուն հետ քննարկեց թղթածրարը և կառավարութեան որոշումը վերատեսուելու և նիւթերու հետևանքները:

Պեգիլ շեշտեց, որ Պըրրի, «Ամայ» շարժումը և դիմադրութիւնը կը հակեն քաղաքացիներուն իրաւունքներուն և շահերուն:

### ՊԸՐՐԻ ԱՆՉԱՄԲ ՊԻՏԻ ՀԵՏԵԻ ԱՐԵՒՍԵԱՆ ՊԵՐԱԱՅԻ ԵՒ ՀԱՐԱԻ ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱԾԵԱՍԱՆՔՆԵՐՈՒՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի երէկ Մասլէհի մէջ քննարկեց արեւմտեան Պեքայի բարգաւաճման և վերաշինութեան առնչուող ծրագիրներ՝ տարբեր շրջաններու քաղաքացիներու հետ:

Քննարկուեցան յատկապէս շրջանին մէջ կամուրջներու և ճամբաներու վերաշինութեան ծրագիրները, Պեքայի և հարաւը կամուրջներու նպատակով:

Հանդիպումին ետք Պըրրի նշեալ ծրագիրներու գործադրութեան պատասխանատուներուն հետ ընեցաւ հեռաձայնային հաղորդակցութիւններ և խոստացաւ այս հարցը անձամբ քննարկել:

### ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Յաջորդաբար երկրորդ տարին ըլլալով, Հայ Կաթողիկէ Սեբոստիան Բարձրագոյն վարժարանը այս ամառ պիտի մասնակցի Հայաստանի Հանրապետութեան կրթական և գիտութեան նախարարութեան կազմակերպած Սփիւքաշայ Ուսուցչներու Վերապատրաստման Դասընթացներու ծրագիրին: Արժանացնու Երեւանի պիտի առաջ տրուին Ալվարո Արագանը, մասնակցելու համար նախկին արտաքին գործակալներու վերապատրաստման աշխատանքներուն, որոնք պիտի երկարին Օգոստոս ամսուան վրայ: Սեր մասնակցութիւնը կը բխի Սեբոստիան վարժարանէն: Երեսփոխան Վահագն Կարամանուկեան յանձնարարեց քննարկելու և համոզուելու:

ՏՆՈՒՆԻԹԻՒՆ  
ԸՄՅ ԿԱԹ. ՍԵՍՐՊՊԵԱՆ  
ԲԱՐՁՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Դատաստանական Խորհուրդի գրասենեակի ամառնային շրջանի ժամանակացոյցը 15 - 7 - 2003 մինչև 30 - 9 - 2003՝

Երկուշաբթի ժամը 8:30 - 12:00  
Չորեքշաբթի ժամը 8:30 - 12:00  
Հինգշաբթի ժամը 8:30 - 12:00  
Շաբաթ ժամը 8:30 - 12:00

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

### ԱԶԳԱՅԻՆ ԵՂԻՇԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈՒԼԵՆ 2003 - 2004 ՏԱՐԵՇՐՁԱՆ

2003 - 2004 կրթական տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են և պիտի շարունակուին մինչև 31 Յուլի 2003, ամէն օր (բացի Շաբաթ և Կիրակի օրերէն) ժամը 8:00էն 14:00:

Նորեկ աշակերտները պէտք է ներկայացնեն անձնաթուղթի լուսապատճեն, նախկին վարժարանէն բարձրագոյն վկայագիր և վիճակագրոյ, կրթական նախարարութեան կողմէ վաւերացուած փոխանցագիր և 3 լուսանկար:

ՄԱՆԿԱՍՍՈՒՐ Կ'ընդունուին 4 ամիսէն սկսեալ մանուկներ:

ՏՆՈՒՆԻԹԻՒՆ

**AREV**  
BOUTIQUE

JAL EL DIB-CENTER OSCAR  
TEL.: (04) 715170 FAX: (04) 713397  
BOURJ HAMOUD-CENTER ARINE  
TEL.: (01) 254953-4  
AREV@hotmail.com

## ԱՉԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Ընդառաջելով վեհափառ հայրապետի փափաքին՝ Անթիլիաս այցելեցին Յունաստանի թեմի առաջնորդ Սահակ արք. Այվապեան եւ թեմի վարչութեան հետեւեալ անդամները՝ տոբթ. Արմէն Տէրեան, Գեղամ Եղաճեան եւ Նուարդ Չալեան:

Սոյն այցելութեան նպատակն էր հանդիպումներ ունենալ վեհափառին եւ Այվապեան վարչութեան կրօնական եւ քաղաքական ժողովներուն հետ: Հանդիպումները տեղի ունեցան Չորեքշաբթի 9 եւ Հինգշաբթի 10 Յուլիսին, Պիթֆայայի վանքին մէջ:

Կրօնական ժողովին հետ տեղի ունեցած հանդիպման ընթացքին Յունաստանի առաջնորդ արքայանք լայն Կեկոյց մը տուաւ Յունաստանի հայոց կրօնական կեանքի վանապան երեսներուն մասին: Հոգեւոր իմաստով, գնահատելի գործ կը կատարուի թեմին մէջ: Կրօնական դաստիարակութիւնը ու հոգեւոր արժէքներու տարածումը մնայուն մտահոգութիւն դարձած են Այվապեան առաջնորդարանին: Վեհափառը իր գնահատանքին առընթեր նաեւ կատարեց կարգ մը ցուցումներ, որպէսզի կրօնական աշխատանքներն ու ծրագիրները կարենան իրագործուիլ աւելի ազդու ու նպատակասլաց կերպով: Վեհափառը կարեւորութեամբ շեշտեց Եկեղեցին թեմի կեանքին մէջ կենդանի ներկայութիւն դարձնելու անհրաժեշտութիւնը:

Յունաստանի թեմի ներկայացուցիչներուն հանդիպումը Այվապեան Կեդրոնական Վարչութեան Քաղաքական ժողովին հետ եղաւ առիթ մը նախ ընդհանուր ակնարկ մը նետելու թեմի կեանքին իր վարչական, տնտեսական, կրթական, ընկերային եւ այլ երեսներով: Ապա կարգ մը մտահոգութիւններ ու ծրագիրներ աւելի լայնորէն քննարկուեցան, ինչպէս Հայաստանէն՝ արտագաղթած եւ Յունաստան հաստատուած բազմաազգայար հայերու աւելիով օգտակար ըլլալու անհրաժեշտութիւնը եւ կրթական կեանքին յատուկ կարեւորութիւն ընծայելու հրամայականը:

## ՄԻԱՑԵԱԿ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ, ԱԻՍՏՐԱԼԻՈՅ, ԲՈՒԷՅԹԻ ԵՒ ԵԳԻՊՏՈՍԻ ԴԵՍՊԱՆՆԵՐԸ՝ ԶՍՍԱՌՈՒ ՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Հայ կաթողիկէ ներսէս - Պետրոս ԺԹ. պատրիարքի հրահրով, Երէկ Չմմառու վանք այցելեցին Միացեալ Նահանգներու, Աւստրալիոյ, Բուէյթի եւ Եգիպտոսի դեսպանները եւ ճաշի հիւրը եղան պատրիարքին: Ներկայ էին համայնքի հոգեւոր այլ պատասխանատուներ եւ երեւելիներ:

Պօսք առին Չմմառու վանքի մեծաւոր Հայր Ժորժ Եղիայեան եւ պատրիարքը: Ապա, հիւրերը շրջեցան նաեւ վանքի շրջակայքը, այցելեցին թանգարանը եւ վանքի եկեղեցին:

### ՎԱՐՉՈՒ ԽԱՆՈՒԹ (ՏԱՄԱՆՈՎ)

● Պուրճ Կամուտ, Ս. Վարդանանց եկեղեցւոյ դիմաց, 2 փեղկով, 100 մէթր տարածութեամբ: Դիմել հեռ. 03-313618 եւ 01-586495:

### ԿՈՒՉՈՒԻՆ

● Այր մարդու շափկի գործատեղի մը կարիք ունի շափկ կարող վարպետ գործաւորներու, նաեւ օդակ կարող գործաւորուհիներու: Հեռ. 03-292045:

### «ՃԱՆՉՆԱՆՔ ԼԻԲԱՆԱՆԸ»

Կազմակերպութեամբ ԱՉԳԱՅԻՆ ԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ 2003ի ամրան ընթացքին ալ, 11 Յուլիսին 19 Սեպտեմբեր, իւրաքանչիւր Հինգշաբթի պիտի իրագործուի «ՃԱՆՉՆԱՆՔ ԼԻԲԱՆԱՆԸ» ծրագիրը, 5 - 13 տարեկան դպրոցականներու համար: Ծրագիրը կ'ընդգրկէ շրջապտոյտներ՝ դէպի Լիբանանի գանազան տեսարժան, պատմական վայրերը: Յաւելեալ մանրամասնութիւններու համար հեռաձայնել 01 - 261622 թիւին, կտօսի առաջ ժամը 9:00էն 12:00: ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ ԱՉԳԱՅԻՆ ԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ

### «ՎԱՆՆՅ ԶԱՅՆ» «ՎԱՆՆՅ ԶԱՅՆ» ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ ՀԱՒԱՔՈՂ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ

«Վանայ Չայն» կարիք ունի ծանուցումներ հաւաքող ներկայացուցիչ երիտասարդուհիներու եւ երիտասարդներու, որոնք պիտի աշխատին շահաբաժինի դրութեամբ: Հայերէնի կողմին ֆրանսերէն կամ անգլերէն եւ արաբերէն գիտնալը պայման է: Կը խնդրուի անձամբ ներկայանալ «Վանայ Չայն»:

## ՀԱՄԱՉԳԱՅԻՆԻ ՄԵԼԱՆՔՈՆ ԵՒ ՀԱՅԿ ԱՐՍԼԱՆԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՇԿԵՐՏՆԵՐՈՒՆ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՊԱՔԱԼՕՐԵԱՅԻՆ

Ֆրանսական պարայօրէջայի ներկայացած 28 աշակերտներէն յաջողեցան 23ը (82,14%), որոնցմէ մէկը՝ լաւ, իսկ հինգը՝ բարձրակարգ լաւ իշխողութեամբ: Ստորեւ՝ Մ. եւ Հ. Արսլանեան ձեւարանէն ֆրանսական պարայօրէջային յաջողած աշակերտներուն անունացանկը:

Գրտական դասարանէն. Պարսունեան Սարին (բաւական լաւ), Տէր Պետրոսեան Ալիք, Էթիէմէյեան Նուշիկ, Գրիգորեան Անի, Ներսէսեան Լարա, Ալեքսանեան Վահէ, Հաճէթեան Շարլ, Քէշիշեան Գէորգ (բաւական լաւ): Գիտական դասարանէն. Արիսեան Կասիա, Այանեան Արին, Տէտեան Անայիս (բաւական լաւ), Մանկասարեան Կարինէ, Սերայտարեան Յոյեր (բաւական լաւ), Եղիայեան Հեղնար, Չէթիկեան Սանան, Արամայեան Յովիկ, Տեմիրճեան Նարեկ, Տեմիրճեան Ռազմիկ, Տէր Թորոսեան Ալեք, Գրիգորեան Սեւակ, Մկրտիչեան Ատուր (լաւ), Բարմաքսեան Ռազմիկ, Եղիայեան Սեպուհի (բաւական լաւ):



# AFHIL

## ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՄԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

**RENT AND SALE**



**AT HOME**

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

**HOME MEDICAL EQUIPMENT SERVICES**

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen

**HOME MEDICAL EQUIPMENT SERVICES**




- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

**ՅՈՒՑԱՍԱՐԱԸ՝ «ԱՐԻՆ» ՄԵՆԹՐ ԳՐԱՆԵՆԱԿ՝ ԱՅՇԻԼ, ԱՅԵՏԻ ՇԵՆՔ, Բ. ՅԱՐԿ**






ՇՆԻ. (02) 242556/7

**NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.**



## ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Լիբանանեան օրաթերթերը 11 Յուլիսի թիով լուսարձակի տակ առած են Նախարարաց Խորհուրդի նիստն ու անոր ընթացքին արձանագրուած իրադարձութիւնները:

Շրջանային եւ միջազգային պարզացումներուն մասին տեղական մամուլը գրած է, թէ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ կը խոստովանի, թէ ապահովական լուրջ հարցեր կան Իրաքի մէջ: Պաղեստինեան հարցին առընդիմութեամբ թերթը նշած է, թէ եգիպտական պատուիրակութիւն մը շրջան ուղղուեցաւ համաձայնութեան պահպանման համար աշխատանքներ տանելու եւ ներքին միակամութիւն հաստատելու համար:

Այս մասին «Նահար» օրաթերթը գրած է, որ եգիպտական միջամտութիւն տեղի ունեցաւ Ֆարաքի մէջ առկա անհամաձայնութիւնը լուծելու համար. իսկ Արաքի Վանի Հասանը նշանակեց շարժումին ընդհանուր կառավարիչը եւ շեշտեց, թէ խաղաղութիւնը կը հանդիսանայ իրենց առաջին ընտրանքը:

Ըստ թերթին, Սլէյման կ'այցելէ Արաքի թիւ Ապպաի Ֆարաքի մէջ եղած անհամաձայնութիւններուն երբ մը գտնելու համար: «Սաֆիր» օրաթերթը նշած է, որ պաղեստինեան ներքին տարակարծութիւնները մութի մէջ կը ձգեն Իրաքի կողմէ գերիներու ապստամբական պարագան: Թերթին համաձայն, Ապու Մապի իրեն հետ համաձայնութիւնը բաժնող մը չի գտնէ:

Ըստ «Քիֆահ Արաքի»

պի»ի, դէպի խաղաղութիւն յառաջադրուած անկարելի է, եթէ իշխանութիւնը քայլերու չընդմէ:

«Մուսթաքպայ» գրած է, որ եգիպտական կողմէ աշխուժ միջամտութիւն տեղի ունեցաւ պաղեստինեան տագնապի լուծման, իսկ արմատական կազմակերպութիւնները կառչած կը մնան համաձայնութեան գործադրութեան:

«Լիուս» դիտել տուած է, թէ Իրաքի վարչապետը Լոնտոն կը մեկնի լարուածութիւնը թեթեւցնելու համար, իսկ Իրաքի Երազի իսլամական խաղաղութիւնը կը շեղեն Տահլան - Մոֆապ հանդիպումը, մինչ գերիներու եւ բռնագրաւեալ հողերէն քաշուելու հարցը կը սպասէ Ապպաի եւ Շարոնի հանդիպումին:

Ըստ «Մուսթաքպայ» պաղեստինեան ինքնիշխանութիւնը կը վերահաստատեն համաձայնութեան իրենց պարզակցութիւնը, իսկ Համապ կը նշէ, որ պիտի չհակադրուի ընդդիմութեան ընտրանքին:

Իրաքեան պարզացումներուն մասին «Սաֆիր» գրած է, թէ Իրաքեան ընդդիմութիւնը կը սաստկացնէ իր յարձակումները եւ 4 ամերիկացիներ կը սպաննէ:

Ըստ «Նահար»ի, Պուշ կը խոստովանի, թէ Իրաքի մէջ ապահովական լուրջ հարցեր գոյութիւն ունին, իսկ դաշնակից ուժերը կը դիմեն այլ կազմակերպութիւններու միութիւններու օժանդակութեան:

Թերթին համաձայն, ժողովրդավար ծերակուտականներ կը քննադատեն ամերիկեան զարտնի սպասարկութիւնը, իսկ բրիտանացի պատասխանատուներ կը կասկածին, թէ հաւաքական քանդումի վէպեր գոյութիւն ունենան: Պէր կը յայտնէ, թէ ինք վստահ է, որ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդը պատերազմի անհրաժեշտութեան առնչութեամբ համուրէն լուրջ քննարկումներ կը կատարուին:

Ըստ «Մուսթաքպայ» դիտել տուած է, թէ Ասատ եւ Էրտողան կը քննարկեն իրենց յարաբերութիւնները եւ խաղաղութեան հաստատման գործընթացը: «Մուսթաքպայ» համաձայն, Պուշ փիղերուն դէմ յանդիման կը գտնուի Ափրիկէի անտառներուն մէջ:

պիտի ստիպէ, որ իրենց առաքելութիւնները միջազգային ուժերուն յանձնեն ու քաշուին:

«Լիուս» գրած է, թէ 3 ամերիկացի պինդորներ կը մահանան Մահմուտիայի եւ Թիքրիթի մէջ. ընդդիմադիրներուն յարձակումները կը ստիպեն ամերիկեան ուժերը, որ դուրս գան Ֆայումայի իրենց կեդրոններէն եւ հաստատուին անկէ դուրս:

«Քիֆահ Արաքի» դիտել տուած է, թէ Պուշ յայտարարած է, որ Իրաքի մէջ ապահովական լուրջ հարցերու դէմ յանդիման կը գտնուին:

Իրաքի մէջ ամերիկեան պինդորներու սպանութիւնը կը շարունակուի, իսկ ամերիկացիները կ'առաջարկեն «Ասատ մի ձեռքով» դիմել հարցերու լուծման համար:

Փոտլը կը պաշտպանէ կեղծուած տեղեկագիրներ օգտագործելու պարագան եւ կը հաստատէ, որ նախագահը ստիպուած չէ քսցատուութիւններ տալու:


«Տիար» նշած է, որ Իրաքի մէջ ապահովական հարցեր կը դիմագրաւեն եւ մեր պինդութիւնը կը սատակացնէ այդ հարցերը խոհեմութեամբ դիմագրաւելու:

Այլ լուրերու կարգին «Սաֆիր» գրած է, թէ Իրան կը ծիսէ իրաքեան սահմաններու նրբէ խախտում, իսկ Նաժաֆ իր դռները կը փակէ Պրեմիերի դիմաց:

«Քիֆահ Արաքի» նշած է, որ Ասատ հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Էրտողանի հետ եւ Դամասկոս յայտարարեց, որ Լիբանան եւ Սուրիա խաղաղութեան քարտէսի կարիք չունին:


Թերթը գրած է, որ ափրիկեան միութիւնը հակապղտիվ Պուշի կատարած շրջապտոյտին ակնաւորեց այն հարցին, թէ Պուշ պէտք է տարակարծութիւնները անձամբ լուծէ:

«Մուսթաքպայ» դիտել տուած է, թէ Ասատ եւ Էրտողան կը քննարկեն իրենց յարաբերութիւնները եւ խաղաղութեան հաստատման գործընթացը: «Մուսթաքպայ» համաձայն, Պուշ փիղերուն դէմ յանդիման կը գտնուի Ափրիկէի անտառներուն մէջ:



## ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԱՎԻԱՌԴԻՆԵՐ

Այն օդանոսը կանոնաւոր թռիչք՝ ԵՐԵՎԱՆ - ՊԵՅՐՈՒԿ - ԵՐԵՎԱՆ



Լիբանանի ԵՐԿԱՆՈՒՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԹԻՒՆ

**ANSER TRAVEL**

Հեռ. 01-562870, 01-562871  
E-mail: anserian@cyberia.net.lb



# FUEL CARD

## գործածեցէք

Պենզինի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւղը փոխելու կամ գանոնք լուալու պարագային:

Երբ մագուր պիտի գնէք, գործածեցէք FUEL CARD՝ հեռաձայնելով 04 / 715111 - 222 - 333 թիւերուն:

- ▶ MANAR - Տորա
- ▶ ՍԱՐԳԻՍԵԱՆ - Պուրճ Կամուտ
- ▶ BASSIL - Տորա, կամուրջի մօտ
- ▶ AKEL եւ BASSIL - Տորա, «Քրետի Լիպանէ»ի մօտ
- ▶ SPEED - Գանքաշ, Կալէրի Իթթիհատ
- ▶ ԶԱՅԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ - «Ալմազա»
- ▶ MALLAH - Անթիլիաս, կաթողիկոսարանի դիմաց

- ▶ MALLAH - Գաթե Դաուարնէ
- ▶ MALLAH - Պալիմ
- ▶ MALLAH - Ժալ էլ Տիպի մայրուղի
- ▶ CORAL - Էշրեֆիէ, Ս. Յակոբ Եկեղեցւոյ մօտ
- ▶ SAAD - Մար Միայէ
- ▶ SPEED - Նաիր, «Փէօժօ» ընկերութեան մօտ
- ▶ PHOENICIA - Այնճարի մուտքին
- ▶ MALLAH - Պապատէք

ԱԿՆԱՐԿ

ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ՄԵՐ ԿԵԱՆՔԸ ՇՆՉԱԻՌՈՂ «ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐ»Ը

Արմատներուն կառչած մնալու արտաշատու- քիւնն է այս: Միևնույն քաղաքին կամ գիւղիմ մէջ ծնած ըլլալու, բախտակից կոչուելու բնական ընթացք մը: Ծննդավայրը ուժ մը ունի, որ երբեմն հայրենիք հասկացողութեան հետ կը շփոթուի, կը կշռուի, չափ ու չափանիշի կը վերածուի: Ո՛ր մէկն է ուժեղը, գերադասը, հայրենիքը, թէ ծննդավայրը: Առաջինը ազգի մը համայնական ծննդոցն է, երկրորդը՝ անձնական օրօրոցի կշռոյթը ունի: Իսկ եթէ ծննդավայրը ինքը հայրենիքը է, երկրորդը կը փարատի նույնիսկ տալիս, կը դառնա տէրը համընդհանուր ծննդավայրի:

Իսկ մենք՝ Սփիւռք դարձած հայրենագուրկներս, մեր երկրորդ հայրենիքներուն հաւատարմութիւն ցուցաբերած որդիներն հայոց, կը տուչորիք արմատներուն դալար մնալու տենչով: Իւրաքանչիւր հայ ծնունդն է իր արմատին, հոգեպէս կապուած է անոր մէկ նիւղին, քանի որ յսած է իր պայտերէն, թէ տարագրութիւն կոչուած, Ցեղասպանութիւն գարնուրելի բառով կըրուած նախատարիքի մը գրեական է ինք...

Հայրենակցական միութիւնները յատաչապահներն են արմատները դալար ու ընձիւղուած պահելու առաքելութեամբ:

Այսօր կ'ուզենք մտահանշել լիբանանահայ գաղութին մէջ իր ներխառնութիւնը պահպանող Մարաշի Հայրենակցական Միութեան ազգօգուտ գործունէութիւնը: Բարեսիրական մրնոյրտով թափառու ալս կառույցը Լիբանանի մէջ կ'ունենայ այնպիսի գործունէութիւն, որ առաջին ակնարկով լուսանցքային նկատուի հաւանաբար, բայց որ ունի կարեւոր ներդրում՝ կրթական թէ հոգատարական, նոյնիսկ մշակութային իմաստներով:

Այս միութիւնը կրթական նպատ ունած է կարիքաւոր այն աշակերտներուն, որոնց մեծ հայրերը կամ անոնց մեծ հայրերը արմատներ ունեցած են Կիլիկիոյ Մարաշ քաղաքին մէջ, որ պատմական օրերուն կոչուած է Գերմանիկ: Կը նպատակ, կ'օժանդակէ հիւանդ հայրենակիցներու, կը կարգաւարտէ ճիւղերով Կիլիկիոյ հանդիպումներ՝ աշակերտները վարչութեան կողմէ կազմուած Տիկնանց Յանձնախումբին: Ընկերային ալս հանդիպումները կը յատկանշուին ընդհանրապէս սոսկական հանդիպութիւններով՝ Նոր Տարի, Ծնունդ, Ջատիկ, Համբարձում, Մայրերու Օր եւ դաշտագնացութիւն:

Վերոյիշեալ ձեռնարկներէն բացի, Մարաշի Հայրենակցական Միութեան Լիբանանի մասնաճիւղի Տիկնանց Յանձնախումբը պարբերաբար կը կազմակերպէ Մարաշի նախընտրած քաղաքները նոր սերունդի աղջիկներուն եւ երիտասարդուհիներուն սորվեցնելու, տոհմիկ այս արւեստը փոխանցելու դասաւանդութեան նախաձեռնութիւններ: Այս վերջին գործունէութիւնը արդէն սկսած է ամառային այս եղանակին օգտուելով զպրոցական արձակուրդի ամիսներէն: Դասաւանդութիւնները, ասեղնագործութիւնը եւ մոտէջներ գծելու պահերը սկսած են միութեան տան մէջ (Գերմանիկ համալիր): Արձանագրուած են 22 պարմանուհիներ: Ասեղնագործութիւնը կ'ուսուցանեն Տիկնանց Յանձնախումբի անդամուհիներ, կամաւոր կերպով: Նշենք, որ դասերը անվճար են:

Միութեան վերջին նախաձեռնութիւնը եղաւ տոհմիկ նշներու պատրաստութիւն եւ ցուցադրութիւն՝ խնդրանքով տեղական պատկերասփիւռի մէկ տնօրէնութեան, որով մասնակցութիւն պիտի բերէին «Հայերը Լիբանանի մէջ» յատուկ վաւերագրական ժապաւեցի մը:

ՇԱՀԱՆԴՈՒՆՏ

Լիբանանահայ գաղութը կը հաշուէ մօտ քսան հայրենակցական միութիւններ, իւրաքանչիւրը իր կարգի կը հետապնդէ ազգօգուտ նպատակ, հայրենակիցները քով-քովի բերելով յիշել արմատները, չմոռնալ հայոց պատմութիւնը, եղեռնով տարագրուած հայ ժողովուրդի նախնայինը, ջանքով անխախտ պահել արմատները, ուրոյն յատկանշիչներու պահպանումով, անցնել ըլլան ձեռնարկներ, բարբառ, ընտանեկան սովորութիւններ կամ տոհմիկ նշներ ու մշակոյթ:

Հայրենակցական միութիւնները ազգային մեր Գեոտին ջուր մատակարարող հարկատուներն են: Անոնք պէտք է շնչեն ու շնչաւորեն նոր սերունդները ազգային շնչառութեամբ:

«ԱՉԴԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Քոյրը անոնք, որոնք կը փափաքին «Ազդակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, Միւշեի երեկոյն ԺԱՄՐ 5:00:

ՄԱՀԱՉԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունին մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՆՈՐԱՅՐ ԳԱԻԹԵԱՆ ԾԱՆՕԹԱՑԱԻ ՍԻՆՆԻՔԻ ՀԱՐՅԵՐՈՒՆ

8 Յուլիսին Սիւնիքի մարզ այցելեց Հայաստանի առողջապահութեան նախարար Նորայր Դաւթեան՝ երկու փոխ նախարարներու եւ նախարարութեան վարչութիւններու ղեկավարներու հետ՝ ծանօթանալու համար առողջապահական մարզին դիմագրաւած հարցերուն: Նախարարը այցելեց Սիւնիքի եւ Կապանի առողջապահական հիմնարկները ու մօտէն ծանօթացաւ իրավիճակին: Սիւնիքի մարզպետարանին մէջ կայացաւ լայն խորհրդակցութիւն, մասնակցութեամբ մարզի առողջապահական 24 հաստատութիւններու ղեկավարներուն եւ փոխ մարզպետ Ռուբիկ Սարգսեանի:

Խորհրդակցութեան աւարտին առողջապահութեան նախարարը նշեց, որ այսուհետեւ իր կողմէ մասնաւոր ուշադրութեան առարկայ պիտի դառնայ մարզերու առողջապահական համակարգը եւ ջանք պիտի չինսնայուի առողջապահական հաստատութիւններու աշխատանքը աւելի բարելաւելու ուղղութեամբ:

● Միւս կողմէ, Հայաստանի առողջապահութեան փոխ նախարար Հայկ Դարբինեան լրագրողներուն յայտնեց, որ այսուհետեւ նախարարութեան գրադարանը տեղ պիտի գրաւէ Հայաստանի Ազգային գրադարանին մէջ:

Տասնեակ հազարաւոր հատորներ ունեցող գրադարանին տեղափոխութիւնը պայմանաւորուած է այն հանգամանքով, որ նախարարութեան նոր շէնքը բաւարար չէ եղած տեղաւորելու այդ գիրքերը:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԲԱՆԱԿՑԵԼՈՒ ԿՈՉ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՎԱՐՉԱՄԵՔԵՆԱՅԻՆ

Անցնող շաբթուան ընթացքին Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը ամերիկեան վարչաձեռնարկին կող ուղղեց, որ բանակցութիւններ վարէ Հայաստանի իշխանութիւններուն հետ՝ ընկերային ապահովութեան համաձայնագրի հարցով: Այս համաձայնագիրը կ'առաջադրէ յստակացնել պարտաւորութիւններն ու իրաւունքներն այն անձերուն, որոնք կ'աշխատին թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Միացեալ Նահանգներու մէջ:

Ընկերային ապահովութեան յանձնակատար ձօ էն Պարնհարթի ուղղուած 3 Յուլիս 2003 թուակիր նամակով, Հայ Դատի Յանձնախումբի Ուաշինկթոնի գրասենեակի վարիչ-տնօրէն Արամ Համբարեան նշեց, թէ նման համաձայնագիր մը «գարկ պիտի տայ Ամերիկա-Հայաստան առեւտրական գործակցութեան, օգտակար պիտի ըլլայ ամերիկահայատակներուն, ինչպէս նաեւ տուեալ շրջանին մէջ Ամերիկայի արտաքին յարաբերութիւններուն»: Համբարեան աւելցուց, որ «Հայաստանի մէջ աշխատող ամերիկացիները մասնաշատուկ կերպով պիտի օգտուին հանգստեան թոշակի, անկարութեան եւ այլ մարզերու առաւելութիւններէն, եւ որոնք շատ կենսական են, որպէսզի տնտեսական կապերու գարգացման համար նպաստաւոր մթնոլորտ ստեղծուի»:

Ընկերային ապահովութեան մարզին մէջ Միացեալ Նահանգներ ներկայիս նման համաձայնագիրներ ունին՝ Աւստրալիոյ, Աւստրիոյ, Պելճիքի, Բանտայի, Չիլիի, Ֆինլանտայի, Ֆրանսայի, Գերմանիոյ, Քորէայի եւ բազմաթիւ այլ երկրներու հետ: Այս հարցով րանակցութիւններ տեղի կ'ունենան Արժանթինի եւ Ժափոնի հետ:

Այս համաձայնագիրները կ'առաջադրեն թէ՛ աշխատաւոր եւ թէ՛ գործատէրը գերծ պահել ընկերային ապահովութեան կրկնակի հարկումէն, կը համախմբեն երկու երկրներու մէջ աշխատաւորին վճարած ընկերային ապահովութեան հարկը, որպէսզի ենթակայն անոր հատուցումը ստանայ մէկ երկրի մէջ: Համաձայնագիրը կը նախատեսէ, որ աշխատաւոր մը մէկ երկրի մէջ վճարէ ընկերային ապահովութեան հարկը եւ ոչ թէ՛ զերծ կացուցուի անկէ:

Ամերիկա եւ Հայաստան արդէն իսկ բանակցութիւններ վարած են տնտեսական եւ քննիչ գործակցութեան, ելեմուտքի, նամակատրանային հարցերու, գիտական գործակցութեան եւ առեւտրի գծով:

Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը նաեւ կը քաջալերէ ամերիկեան վարչաձեռնարկն, որ բանակցութիւններ վարէ Հայաստանի հետ կրկնակի հարկերէ խուսափելու, առեւտրի եւ ներդրումային ծրագիրներու, բայց մանաւանդ՝ երկկողմանի ազատ առեւտրի կապակցութեամբ:

ԳՊՐՈՑՆԵՐՈՒ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԱՆԱՋԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՉ

Նախքան կրթական նոր տարեշրջանի վերամուտը, Հայաստանի գաւազան շրջաններուն մէջ, շնորհիւ նպատակաւորողուած պետական կրթական քաղաքականութեան, տեղի կ'ունենան դպրոցներու վերանորոգման աշխատանքներ:

Այսպէս, Արագածոտնի մարզին մէջ կը շարունակուին դպրոցական շէնքերուն վերանորոգման եւ կառուցապատման աշխատանքները: Այս տարուան ընթացքին նախատեսուած է նորոգել 12 դպրոց՝ մարզի գանազան բնակավայրերուն մէջ: Աշխատանքներուն ընդհանուր արժեքը 60 միլիոն դրամ է, որուն յատկացումը կատարած է Հայաստանի կառավարութիւնը՝ պետական պիւտճէէն:

Արագածոտնի մարզպետարանի քաղաքաշինութեան վարչութեան պետ տեղեկացուց, որ շինարարական կազմակերպութիւնները որոշելու համար արդէն յայտարարուած է մրցում, որ նախատեսուած է կազմակերպել այս ամսուան ընթացքին: Այս 12 դպրոցներուն վերանորոգման աւարտով պիտի ներգրկ մարզին մէջ վերանորոգման կարիք ունեցող դպրոցներուն թուը:

Այս տարուան պետական պիւտճէով Սիւնիքի մարզի հանրակրթական 5 դպրոցներու վերանորոգման համար նախատեսուած է 40 միլիոն դրամ: Նախատեսուած աշխատանքները կ'ընդգրկեն դպրոցական շէնքերու տանիքներու եւ կոյուղիներու բարեկարգումը, ապակեպատումը եւ ներքին յարգարումը:

Միւս կողմէ, մինչեւ տարեվերջ Արմաւիրի մարզին մէջ պիտի վերանորոգուին 26 դպրոց եւ 9 մշակոյթի տուն: Ընկերային ներդրումներու հիմնադրամը այդ նպատակով մարզին պիտի տրամադրէ շուրջ 1 միլիոն 200 հազար դրամ:

Արմաւիրի մարզային խորհուրդին որոշումով արդէն կազմուած է համապատասխան համայնքներուն ցանկը՝ հաշուի առնելով նորոգման անհրաժեշտութեան աստիճանը: Արմաւիրի մարզպետարանի քաղաքաշինութեան վարչութեան պետ Նաչիկ Մկրտիչեան տեղեկացուց, որ վերանորոգման աշխատանքները իրականացնելու համար համայնքները յոյնպէս ներդրումներ պիտի կատարեն. իւրաքանչիւր համայնք իր պիւտճէէն պիտի տրամադրէ ծախսերուն 10 առ հարիւրը:

ՌԵՍՊԵԿՏԻՆԵՐՈՒ ԱՄՍԱԿԱՆՆԵՐՈՒ 70 ԱՌ ՀԱՐԻՒՐԻ ՅԱՒԵԼՈՒՄ

Յաջորդ տարի Հայաստանի հանրակրթական դպրոցներու ուսուցիչներու աշխատավարձը պիտի բարձրանայ 70 առ հարիւրով: Այս

մասին յայտարարած է Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարար Սերգօ Երիցեան, մամուլի ասուլիսի մը ընթացքին: Նախարարին համաձայն, յաջորդ տարի նախապէս որոշուած 20,500-ին փոխարէն դպրոցներու ուսուցչական կազմերը պիտի կրճատուին 9 հազարով, սակայն կը տարուին բանակցութիւններ կառավարութեան, Ազգային ժողովի յանձնախումբին եւ կենսաթոշակային հիմնադրամի հետ՝ այդ թիւը նուազագոյնի հասցնելու համար:

ԱՅՍ ՏԱՐԻ «ՆՊԱՍՏ ԱՇԽԱՍԱՆՔԻ ԳԻՄԱՅ» ԾՐԱԳԻՐԸ Կ'ԻՐԱԿԱՆԱՑՈՒԻ 500 ՄԻԼԻՈՆ ԳՐԱՄՈՎ

Այս տարի «Նպաստ աշխատանքի դիմաց» ծրագիրին յատկացուած է 500 միլիոն դրամ, ճիշդ ամիսը, որքան անցեալ տարուան յատկացումը: Ասկէ գտաւ, 10 միլիոն դրամ եւս յատկացուած է աշխատանքներու կազմակերպման այլ ծախսերու համար:

Ըստ Հայաստանի ընկերային ապահովութեան նախարարութեան զբաղուածութեան հանրապետական ծառայութեան լրատուական բաժանմունքին տրամադրած տուեալներուն, Երեւանի մէջ աշխատանքներու իրականացման համար յատկացուած է 85 միլիոն դրամ, Արագածոտնին՝ 15 միլիոն, Արարատին՝ 22 միլիոն, Արմաւիրին՝ 17 միլիոն, Գեղարքունիքին՝ 28 միլիոն, Լոռիին՝ 65 միլիոն, Կոտայքին՝ 35 միլիոն, իսկ Սիւնիքի, Վայոց Ձորի եւ Տաւուշի մարզերուն մէջ՝ համապատասխանաբար 50, 12 եւ 31 միլիոն դրամ: Մեծագոյն գումարը յատկացուած է Շիրակի մարզին՝ 130 միլիոն դրամ այնտեղ իրականացուող շինարարական աշխատանքներու ծախսերուն պատճառով: Արդէն Շիրակի, Կոտայքի, Արմաւիրի, Լոռիի, Տաւուշի եւ Սիւնիքի մարզերուն մէջ վաւերացուած եւ գործադրութեան ընթացքի մէջ է 125 ծրագիր:

ԻՋԵՒԱՆՅԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ «ԿԻՆԷՄ»Ի ՄԵՉ

Իջեւանցի բանաստեղծ եւ Տաւուշի մարզպետ Լեւրիկ Զիրուխչեանի Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութինին նուիրուած «Վլադիմիր-ների Վլադիմիր» գիրքը այս տարի հայերէն եւ ռուսերէն լեզուներով լոյս տեսած է Երեւանի «Վան Արեան» հրատարակչատունէն: Անիկա 1226 տողէ բաղկացած առանց վերջակէտի բանաստեղծութիւն է:

Գիրքին մէջ օրինակը Հայաստանի մէջ Ռուսիոյ հիպոտոս Վլադիմիր Սրուլիովի միջոցով յանձնուած է Ռուսիոյ առաջին տիկին Լիւսիլյա Փութինային՝ վերջինիս Հայաստան տուած այցելութեան ընթացքին:

Հեղինակը կը յաւակնի տեղ գրաւել «Կինէս»ի մրցանիչներու գիրքին մէջ՝ իբրեւ աշխարհի ամէնէն երկար չափածոյ տողի հեղինակ: Այդ առնչութեամբ հեղինակը արդէն դիմում կատարած է «Կինէս»ի խմբագրութեան:

Նշենք, որ դարձեալ «Վան Արեան» հրատարակչութիւնը ներկայիս լոյս կ'ընծայէ Լ. Զիրուխչեանի «Հայաստան լեբան որմնագիրը» բանաստեղծութիւնը՝ նուիրուած նախագահ Ռոպէյրթ Քոչարեանի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԵՆԵԿԱՅԻՆ ՆՈՒՎԱԿԱՆՈՒՄԻ ՀԱՄԵՐԳ՝ ՇՈՒՇՈՒ ՄԵՉ

Արամ խաչատրեանի ծննդեան 100ամեակին առիթով Հայաստանի Սենեկային նուագախումբը, Արամ Ղարաբէկեանի ղեկավարութեամբ, բարեգործական երեք համերգ ունեցաւ Արցախի մէջ: Համերգները տեղի ունեցան 3, 4 եւ 5 Յուլիսին Ստեփանակերտի, Գանձասարի եկեղեցւոյ գաւիթի եւ Շուշիի մէջ:

Ըստ նուագախումբի տնօրէն Արմէն Արարեանի, այս համերգներուն նպատակն է աջակցիլ 1901ին հիմնուած եւ Արցախեան ազատամարտի օրերուն քանդուած Շուշիի Ռէպուբլիկան ուսումնարանի վերանորոգութեան: Համերգները տեղի ունեցան մեծ յաջողութեամբ: Ներկա գտնուեցան Լեւոնայի Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Արկաղի Դուկասեան, վարչապետ Անուշահան Դանիէլեան, Հայաստանի եւ Լեւոնայի Ղարաբաղի Հանրապետութեան մշակոյթի նախարարները, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի գործադիր տնօրէն Վահան Տէր Դեռնդեան, ղեսպաններ, զբօսաշրջիկներ եւ հազարաւոր հանդիսատեսներ:

ՀԱՎԱՀԱՅ ԳՐԳՈՒԹԻՒՆ ՌՈՒՄԻՈՅ ԻՇԻՄ ՔԱՂԱՔԻՆ ՄԵՉ

Քրասնոտարի «Երկրամաս» թերթը կը տեղեկացնէ, թէ Ռուսիոյ Տիւմէնի մարզի Իշիմ քաղաքի իրաւապահ մարմիններուն կարծիքով, քաղաքի շէնքերու պատերուն վրայ եւ փողոցներուն մէջ երեւցած հակահայ գրութիւնները կրնան ազգամիջեան խռովութիւններու պատճառ դառնալ, որովհետեւ այդ կոչերն ու գրութիւնները վերաւորական են տեղւոյն հայ համայնքին համար:

Իշիմի դատախազութիւնը հաղորդած է, թէ այդ յայտարարութիւնները վստասաբար ոչ գիտակից մարդոց ձեռքի գործն են եւ շարունակութիւնն են երիտասարդական խմբաւորման մը ու հայերու միջեւ տեղի ունեցած տագնապին:

16 Յուլիսին քաղաքի կեդրոնական հրապարակին մէջ տեղի ունեցած է ընդհարում ազգային հիմքի վրայ, որուն հիման վրայ օրինապահ իշխանութիւնները քննութիւն բացած են: Հակահայ գրութիւններուն առիթով եւս քննութիւն բացուած է:

ՄԵՍՐՈՊԵԱՆ ԱՐՈՒՄՏՄՏԻՑ ԿԱՐԺԱՐԱՆ

Ամառային օգտակար ժամանց  
Դաստիարակչական համալի ծրագիր

**Ուլասիս** 2003

5-էն 13 տարեկան պատանիներու համար

14 Յուլիսէն մինչեւ 5 Սեպտեմբեր

Արձանագրութիւնները կը սկսին 9 Յունիսին

Ծրագրի անդամանութիւնները՝  
**ONLINE**  
www.mesrobian.com


Պուրճ Գանուտ, Արաքս փողոց, 01-260504

**www.aztagdaily.com**

# Գրական Էջ

## ԵՍ ՆՐԱ ՄԻԱԿ ԸՆԹԵՐՑՈՂՆ ԷԻ

### ԱՀԱ ԵԿԱԻ, ԱՀԱ ՄԵԱՑ...



1934ին, «Սթրոկ» ամսագիրի փոխարար ամսուան համարին մէջ իր առաջին պատմուածքը «Յանդուգն երիտասարդը թռչող մարգածողին վրայ» ստեղծումը ստորագրելի ուղիղ ութ ամիս ետք, Ուիլիամ Սարոյեան անուն անծանօթ երիտասարդ դարձաւ ինքզինք պարտադրած նոր գէմք մը, երբ նոյն տարուան Հոկտեմբերին «Ռանդոմ Էաուս» հրատարակչատունը լոյս ընծայեց անոր պատմուածքներու առաջին հատորը: 26 տարեկանին, իր առաջին գիրքով հոչակաւոր դարձած «տարուան ամէնէն շատ ընթերցուած» գրագետը արտակարգ ինքնուրոյնութեամբ եւ ամբողջակաօրէն ճոր աշխարհով նոր ուղղութիւն մը բացաւ ամերիկեան արձակ գրականութեան մէջ, որ այնուհետեւ կոչուեցաւ «Սարոյեանական աշխարհ»: Պարզ, բարի, ըմբոստ, անկաշառ, ետահուզ, անմեղ, կրքոտ, պատուաստող իր իսկ բառերով «քիչ մը խենք» կենդանի տիպարներու կենսունակ կեանքը սպիտակ բոլորին վրայ վերստեղծելով՝ այս անհանդարտ ու տարօրինակ հայր մուտք գործեց ո՛չ միայն միլիոններու ամերիկացիներու սրտերէն ներս, այլեւ հասարակացաւ բազմատասնեակ ազգերու բազմամիլիոն ընթերցողներու շիշողութեան մէջ՝ դառնալով քսաներորդ դարու նշմարիտ մարդը մարմնաւորած նշմարտագոյն եւ հանճարեղ ներկայացուցչներէն մէկը:

Իրաւ, մշտանորոգ, այլազան, բայց միշտ իր էութեան կանկարագիրին հաւատարիմ Ուիլիամ Սարոյեան այնուհետեւ իր հայրիւրի պտուղն ու իրաւունքն ստացաւ իր որդեգրած յարազարի եւ հիւստի մի արժանի պարտն ո՛չ միայն իր անձն ու գրական գոհարները, այլեւ իր անկրկնելի ստեղծութիւններէն ու բացառիկ անհատականութենէն ստաջ, իր լիբրառ ու նշմարիտ անձին վարակիչ օրինակին ընդմէջէն՝ փոքրաբախ հայ ժողովուրդին մէջ՝ յատմութիւնը, մշակոյթը, քաղաքակրթութիւնը, ապրելու խանդավառութիւնը եւ աշխարհի բոլոր իրաւաւորներն ու մահուան չբաժնիները յարաբարեւոյն հայ ցեղին բացառիկ տոկունութիւնը, անպակա ու ժը, արարտագած վեճակամութիւնն ու ուխտը:

Այսպէս ապրեցաւ Պիլիպի անմար կարօտը աշխարհի չորս ծագերուն սրբազան դրօշի մը պէս ծածանած իր բաւ պիտեանով ծանօթ այս «բարի հսկան», նշմարիտ մեծերուն վախելի մեծամեծ կեանք մը, որուն խօսքը ու գիրք եղաւ հանճարեղ արտացոյցումը տառապանքներով ու երազներով, պոթելուներով եւ խոյանքներով, բարութեամբ եւ ազնուութեամբ միահիւսուած հայ գաղթականներու լուսապայծառ հաւաքական կենսագրութեան: Եւ նոյնիսկ երբ Սարոյեան գրեց հայ վախելի խենթութիւններով հարուստ իր կեանքի փորձառուութիւններուն կամ նոյնիսկ իր ինքնակենսագրութեան մասին, իր ետք երբեք տիպարի պատուանդանին վրայ չգետեղեց, այլոց մեծ սրտիւններուն եւ առաքինութիւններուն լուսապայծառ իր ինքնակարը չգարդարեց, այլ, ընդհակառակը, իր ետին ընդմէջէն գրեց մենքին մասին, հայկեան էութեան առանձնաշատկութիւններուն մասին, երազով ու հաւատքով, նուիրումով ու պայքարով, տեսիլով ու նահատակութեամբ հայ ժողովուրդի արձագանքած քաղաքակրթական ու մարդկային անաճուններուն, եւ տակաւին՝ յաւերժի նամբորդ հայ ժողովուրդի յաւերժագնաց երբքը պողպատող գաղտնիքներուն ու խորհուրդներուն մասին:

Ամենայն պարտութեամբ եւ ամենայն իրաւութեամբ: Գրեցաւ ազօթելու պէս եւ իր խօսքը օժտեց ազօթքին վարակիչ շերտութեամբ, պայծառ իրաւութեամբ եւ առիթնորդ գրաւութեամբ: Եւ շարունակ իր ինքնակենսագրականը պատմած ըլլալու շփոթն ու խաբկանքը ստեղծած գրագետը, նոյնիսկ երբ բուրգին յանձնեց արտասովոր կեանք մը պատկերող ինքնակենսագրական էջեր, միշտ մեծ հաւատարիմ իր եւ իր անմիջական շրջապատին աստիճաններով Հայ Հոգին, մեր դարաւոր եզակի ինքնուրոյն վեր բարձրացնելու ուխտին:

Այս նշմարութիւնը խօսքով ու գործով բազմիցս փաստած գրագետը, յետ-մահու, անճամ մը եւս տուաւ ապացոյցը իր հաւատարիմ արեան, երբ Արսենիկ Պետրոսեան - Մինասեանի բարգձմանութեամբ, երեւանի մէջ լոյս տեսաւ հանճարեղ գրագետին «Ահա եկաւ, ահա գնաց, դուք գիտէք, թէ ով» հրաշալի ինքնակենսագրութիւնը: Կ'արժէ ուշի ու շով կարգալի սարոյեանական ինքնատիպ ռեժիմ, համով ու հոտով, պարզ եւ ներհուկ կենսափոխիտ փայտութեամբ, բայց այս բոլորն առանց նախ ինքնակենսագրութեան 52 տարբեր խորագիրներ կրող բաժինները, որպէսզի հատորին վերնագիրը սրբագրելով, հպարտօրէն ըսենք միաձայն «Ահա եկաւ, ահա մնաց»...

Ս. ԿՐԻՍՏՈՒՆ

Մայրս դուրս հանեց հօրս գրուածքների կապոցը, երբ հարցրի, թէ կարո՞ղ էի նայել դրանք: Ես ինք կամ տաս տարեկան էի. մենք վերագործել էինք Ֆրեյնո, ապրում էինք մեր վարձած տան մէջ, Սան Բենիթօ փողոցում: Կարող եմ ես սասել՝ այս մի կարեւոր դէպք էր իմ կեանքում: Առաջինը՝ մի քիչ գարմացել էի, որ մայրս խնամքով պահել էր հօրս բաներից մէկը, որովհետեւ թուում էր չար երկար էր անցել այն ժամանակներից, երբ նա եկաւ ու գնաց եւ ի՛նչ օգուտ ունէր պահել անպէտք բաներ, ինչպիսին էր մի այսպիսի անյայտ գրողի գրուածքները, երբ գրողը ինքը երկար ժամանակ էր ինչ բացակա էր մի աշխարհից, որն արագ կերպով առաջ էր գնացել: Երկրորդ՝ ես հաճոյք էի զգում, որ նա հաւատում էր ես արժանի էի նայելու դրանք:

«Աւելի շատ էր», ասաց մայրս հայերէնով, «Մի քիչ նա կորցրեց, մի քիչ մենք կորցրինք, բոլորն այս է, որ մնացել է»: Հայերէն լեզուով, հասկանում էք, անգլերէն խօսուում էր միայն անպիսի մարդկանց ներկայութեամբ, որոնք չէին կարող հայերէն խօսել:

Նա բացեց կտորի հանգոյցները եւ ծայրերը տարածեց, որպէսզի ինչ կար այնտեղ ամբողջովին տեսնել կարողանայի - ձեռքով պատրաստուած տետրակները եւ ձեռագրերի մի զէջ:

«Դու տեսնում ես. նա տետրակները պատրաստել է ծրարման թղթերից»: Նա գնաց խոհանոց իր գործին:

Ես մի ժամ աշխատում էի հասկանալ դրանք: Այդ մի ժամը նման էր յաւիտենականութեան, եթէ այդ որեւէ բան է նշանակում: Այս նման չէր իր փոքրիկ գրողարանի գրքերին, այս ինքն էր կենդանին. նա պատրաստել էր այս տետրակները եւ ձեռագրերը մասվածառի թղթից, վաճառատան թղթից, որեւէ թուղթ, որ պատահարը ընկել էր ձեռքը, յետոյ նա, ինքը գրել էր այդ թղթի վրայ: Դրանք ամսաթիւ ունէին եւ դրանցից մեծ մասը գրուած էր նախքան իմ ծնունդը: Նրա գրողարանը կազմուած էր այնպիսի գրքերից, որոնք ես գնել էր իր քարոզիչ լինելու կապակցութեամբ: Նրա անունը գրուած էր իւրաքանչիւր գրքի վրայ, որպէզ որ նա եղել էր եւ որ թուի: Նա ո՛չ մի գիրք չէր թողել, որ կապ ունենար իր բանաստեղծ լինելու հետ: Սրանք իր սեփականն էին, մի բան, որի համար թերեւս նոյնիսկ իրեն մի փոքր մեղաւոր էր զգում, որ կարծես թէ բանաստեղծութիւնը գրելը կարող էր թեթեւամիտ համարուել:

1919 թուին, երբ ես տասից-տասնմէկ տարեկան էի դառնում, վատահ էի, որ աշխարհը ինձ խաբել չէր կարող: Ես այդ հասկացել էի դնալով փողոցների միջով՝ թերթ ծախելու ժամանակ, նստելով շարժապատկերների եւ Վոգ-Էլիի սրահներում, երբեմն տեսնելով ամբողջ ներկայացումը, երբեմն տեսնելով կէսը, բայց մերթ ընդ մերթ տեսնելով միայն Վոգ-Էլիի սիրածս որեւէ գործողութիւնը կամ շարժապատկերի այն մասը, որ ինձ ուրախացնում էր: Ես գիտէի հնարքները, թէ ինչպէս կրնայ մտնել թատրոններից ներս, առանց վճարելու, եթէ սոսմ վերցնողներին չէի ճանաչում, ես գիտէի, թէ ինչպէս պէտք է սողոսկել ներս:

Որբանոցի թիթեղեայ պարողից մինչեւ պատերազմի վերջը 1918 թ. Նոյեմբեր 11ը եղած ժամանակամիջոցն իմ կեանքի ամենալեցուն ժամանակն է եղել: Մեր տոմարի մէջ եղած մի քանի նախկին մահերին յաջողեցին մի շարք միայն մեր ընտանիքի մէջ, բայց ոչ միւսներին: 1919 թուից ես ինձ մեծահասակ եւ խելօք էի զգում, կարծես թէ իրաւունք ունէի կամ թէ իրապէս այդպէս կայի. իրողութիւնն այն է, որ ինձ աւելի մեծահասակ էի զգում, քան հայրս էր երբեւէ եղել: Ես զգում էի, որ աշխարհը սարսափեցրել էր նրան, բայց ինձ չէր սարսափեցնում եւ երբեք էլ չէր կարող:

Ես մի վազող էի, իսկ նա հեռու էր եղել վագրերուց: Ես վազում էի ամէն ինչի համար, մասնաւորապէս «Իմիջին Էնթրա»-ի յաւելեալ տպագրութեան դէպքում, որը պատերազմը վերջանալու ժամանակ դուրս էր գալիս դպրոցի ճաշի ընթացքում, այնպէս որ արագ վազողը միայն կարող էր թերթները վերցնել, ծախել եւ մի տուրը աշխատել: Ետոյ վերադառնալ նախքան դպրոցի գնողը հնչելը՝ երեկոյան դասերը սկսելու համար: Ուտեղը կարեւոր հարց չէր մի այդպիսի ժամանակ: Ես յայտնի էի դարձել որպէս արագաշարժ. ամենալաւ անկիւնն ունէի քաղաքում եւ միշտ աւելի շատ թերթ էի կարողանում ծախել, քան միւս թերթ ծախող տղաներից: Պարոն Ետրքը, փողոցի ծախողներին հսկիչը հաւանում էր ինձ, ես էլ նրան էի հաւանում. առաջին հերթին այն բանի համար, որ թոյլատրում էր ինձ թերթ ծախել լաւ իմանալով ես դեռեւս նոյնիսկ ու՛ր ատրեկան չկայի, քանի որ ամենպակասոր տաս տարեկան էր համարում թոյլատրելի:



### ԵՍ ԶԵՄ ԳՆՈՒՄ

Ես Ծօռի որդի՜ն չէի, որ ասում էր ինձ, թէ ինքը մահանում է, եւ նա իմ հայրը չէր: Ես ոչ մէկի որդի՜ն չեմ եղել, բացի իմ հարազատ հօր, բայց անճանօթ ինձ, եւ միայն այն, որ նա երեւաց է եկել իմ մէջ: Ես եղել եմ որդի՜ն, միայն մարդկային ցեղի, որին ես այժմ համարում եմ թէ՛ իմ հայրը եւ թէ իմ որդի՜ն (...)Եւ ես չեմ ձեռագրի, որ այս մտայնութիւնը իմ գեղջուկ լինելու հետեւանքն է: Ես մի քանի անգամ եմ իմ լաւագոյնն է, որպէս անճոր աշխատող, որ հաճոյք է գտնւ իր աշխատանքից, թէ՛ թերահաւատութեամբ եւ թէ հաւատալով դրան: Ես փողոցներից եմ, քաղաքներից ու մայրաքաղաքներից եւ իմ մէջ շատ բան ունեւ դրանց բնոյթից, դրանց առանձնութեան եւ ընկերայնութեան խառնուրդը, դրանց արժանապատուութիւնը ու կեղտոտութիւնը, դրանց անտարբերութիւնը եւ ուշադրութիւնը եւ թող գրողը տանի այդ: Ես նոյնպէս մի գիւղացի եմ: Մի մէջ է խաղողի այգու երկրաչափութիւնը, որթատուկի իմաստութիւնը ինձ է, խաղողի աճեցնելը միտք ունի ինձ համար, խաղողի ուտել եւ գինի խմելը իմ իմաստութեան մեծութիւնն է, թող գրողը տանի դա նոյնպէս: Ես մի գրող եմ, որ գտնւ է, թող գրողը տանի դա նոյնպէս: Ես մի ընթերցող եմ, որ ընթերցում է, գրողը տանի այդ նոյնպէս: Ես գծագրող եմ այն գծագրութիւնների, որոնք ընկնում են մէկը միւսի վրայ՝ մի մեծ ծաղի տերեւների ցմալը: Թող գրողը տանի դա նոյնպէս:

ՌԻՒՆԸՄ ՍԱՐՈՅԵԱՆ

Մի անգամ նա ինձ հետ այնպէս խօսեց, կարծես թէ, իր հասկացողութեամբ, ես իր հասկանալիցն էի: Նա եկել էր իմ անկիւնը, տեսնելու, թէ ես կարիք ունէի՞ աւելի շատ թերթների եւ դա այն պահին, երբ երկու կիսահարեած հնդկա-ամերիկացիներ կարծես մտածում էին սպաննել մէկը միւսին, որն արգելուեց երկու ոստիկանների միջոցով, տանելով նրանց շրջիկ պահակներին մեքենայով:

«Ո՞վ է հասկանում, թէ ինչու են եղբայրները կուռն, Ուիլի: Դու եւ Հենրի կուռնում էք, չէ՞, ես միշտ կուռնել եմ իմ եղբայրների հետ»:

Սկզբում չհաւատացի, որ նրանք եղբայրներ էին: Նրանք այնքան էլ նման չէին, որ եղբայրներ լինէին. իսկ յետոյ յանկարծ, ճիշդ նախքան այսպէս սասելը, հասկացայ, թէ նա ինչ էր ուզում սասել: Ի հարկէ, նրանք եղբայրներ չէին. բայց կարող էին եւ լինել, նայելով նրանց ցաւալի կուռնին. մի ուրիշ տեղից եւ մի վախարակ եկած երկու մոլորուած, չփոթեւած, անգլալեզու եւ կորած մարդիկ, թափառելով մի քաղաքում լցուած օտարականներով. նրանք կուռնել չէին կարող քաղաքի մարդկանց հետ, դրա համար էլ իրար հետ էին կուռնում: Կուռն մի երկուք էր նոր մարդկանց դէմ, որոնք ոչ մի կապ ունէին հնդկա-ամերիկացիների հետ: Վաճառանոցները լցուած էին ապրանքներով, որ նրանք երբեք չէին կարող գործածել եւ ոչ մի կապ ունէին նրանց ունեցած մշտական ապրելակերպի հետ: Նրանք մի շիշ Ուիլի ինչպէս, որից հերթով խմել էին քացարձակ կերպով, մարդկանց եւ ոստիկանների աչքի առաջ. բայց նրանք մնալով իրենք իրենց հետ՝ վերջիվերջոյ յարձակուեցին իրար վրայ, իմ անկիւնում. իսկ շիշը համարեա՛լ դատարկ դրուած էր ձիւռ սանձի վրայ, Հիւֆի գեղիպատարներին կուռնի ուր, որ ինձ ամբողջով գրել էր վերջին խմողը, նախքան կուռն սկսելը: Հիւֆը վերցրեց շիշը կուռն ընթացքում եւ նորից զրեց տեղը՝ կուռնից յետոյ, որը մնացել էր այնտեղ, կարծես յաւիտենա մնալու էր, որպէս հնդկներին սեփականութիւնը. բայց գիշերը փակելուց առաջ, ծեք Հիւֆը վերցրեց շիշը, խմեց մինչեւ վերջ, յետոյ շիշը դնելով կուռնի մէջ՝ հեռացաւ:

Ես ճանաչում էի աշխարհը, այդ նեխուած էր. իսկ ես սիրում էի այդ: Ես ամէն օր վազում էի դէպի դա եւ դէպի դրա միջին մարդիկ, որոնք նոյնպէս նեխուած էին: Ես վստահ էի, որ հայրս չէր ճանաչել աշխարհը, նա ուրիշ բան էր ճանաչել:

Ես վերջրի առաջին տետրակը, մի լուպէ միայն պահեցի, յետոյ կարողացի այն՝ ինչ որ հայրս գրել էր կազմի վրայ: Կարեւոր չէր ինչի մասին էր եւ չեմ կարող պատահ լինել, թէ ինչ էր, բայց կարող եմ վստահ սասել, որ վեր-

նագրից յետոյ գալիս էր իր անունը շատ պարզ անդլերէն գրուած, օտարականի ռեժիմ, որ յատուկ է բոլոր այն մարդկանց ձեռագրերին, որոնք ծնունդով անգլիացի կամ ամերիկացի չեն:

Օրինակ՝ Խօսքը եւ կամ Բանաստեղծութիւն, գրեց՝ Արմենակ Սարոյեան, Բովլըրի, Նիւ Եորք, Յունիս, 1905 թիւ:

Ես գիտեմ, որ նա ապրում էր Բովլըրիում մի որոշ ժամանակ, յետոյ եկաւ Նիւ Եորք, 1905 թուին, միայնակ:

Ես կարողացի բանաստեղծութիւնը. ինչ ձեւով որ եւ ինչքան որ կարող էի հասկանալ այդ տարիքում. յետոյ մի կողմ դնելով, նայեցի միւս տետրակը: Նստել եւ ուսումնասիրում էի դրանք մի ժամի չափ, որն ինձ տարիներ թուացին, անշուշտ 1908ից մինչեւ 1919ը, իմ կեանքի բոլոր տարիները, ինչպէս եւ հօրս վերջին վեց տարիները: Այս, այս, այս է, ահա թէ ինչ էր մնացել - անյաջողութիւն, կորուստ, վախճան: Մի մարդ, որ գրել էր ծրարման թղթի, մտավածառի թղթի կամ որեւէ հին թղթի վրայ, որոնք պէտք չունէին վճարուելու:

Նա չէր յաջողել, բայց կարծես, թէ ինչպէս մի յատուկ շնորհ դէպի ինձ նա պահել էր դրա արձանագրութիւնը - անյաջողութեան, կորուստի ու վախճանի իսկ ես, ճաշասենեակի կլոր սեղանի մօտ նստած, նրա միակ ընթերցողն էի:

Ես չէի կարող կարգալ հայերէն գրուածքները. նայում էի դրանց եւ փորձում էի հաւատալ, որ դրանք նրա լաւագոյն գրուածքներն էին, շատ աւելի լաւ, քան անգլերէն գրուածքները, որոնք հաւանաբար այնքան էլ անպէտք չէին, ինչպէս ես հաւատացած էի այն ժամանակ, եւ ոչ էլ այնքան յիմար ու այնքան անկարեւոր:

Որոշ տեսակէտով գրուածքներ իմ սեփականն էին, որոնք չէի սիրում: Դրանք իրապէս այնքան գորաւոր չէին ճշմարտութիւնն սասելու համար մեր մասին, կամ աշխարհի մասին. իսկ եւ ուզում էի, որ այդպէս լինէին: Նոյնպէս եւ պէտք եղածից քիչ էին. ամէն ինչ կանգ էի առել նախքան վերջանալը: Ոչինչ վերջացած չէր, նոյնիսկ ամենակարճ բանաստեղծութիւնը. նա պէտք էր ունեցել ժամանակի եւ տեղի եւ ոչ մէկը չէր ունեցել: Բայց փոխանակ զայրաբանի ուրիշներին կամ աշխարհի դէմ, այդ գրուածքները ինձ գայրաբան նրա հանդէպ: «Դու ի վիճակի պիտի լինէիր աւելի լաւն անել, քան այդ»: Բայց ես ի նկատի չուռնէի գրուածքները միայն, ես ի նկատի ունէի ապրելու եւ շուտափոյթ անհետանալը. ինչպէս եւ իրաւամբ նկատի չուռնէի տետրակները, որոնք նա պատրաստել էր: Ես սքանչանում էի դրանցով. Ես սիրում էի հասարակ թուղթի, որ այնքան լաւ էր մնացել եւ որ երբեք գրելու համար չէր եղել. ես սիրում էի թանաքը, որով գրուել էր եւ բառերը իրենք, գեղեցիկ գրութիւնը, մտածուած կերպով իրարից հեռաւորութիւնը եւ պարզութիւնը, ամէն ինչ բացի մտքից - անյաջողութիւն, կորուստ եւ վախճան:

«Նա չէր յաջողել. ես կը յաջողեմ: Երբ որ ինքն ու ես գրում էինք ժամանակ, մենք չյաջողեցինք, որովհետեւ ժամանակ էր. բայց այժմ մենակ չի եւ մենք կը յաջողենք: Ես կը գնեմ իմ թուղթը. չեմ ծախի մի մեծ կտոր մասվածառի թուղթ եւ տետրակ պատրաստի. ես կը վճարեմ 10 սենթ մի պատրաստ տետրակի համար եւ նրա մէջ կը գրեմ»: Սկսեցի ձանձկանալ դրանցից եւ գնացի խոհանոց՝ ծրարակից շուր խմելու:

«Լա՛ւ»,- ասաց մայրս, կարծես տարիներ սպասելիս լինէր, լսելու դատավճիռը: «Ի՞նչ իզ ըմէյգինկ» - ասացի ես: Չարմա-նալի, հայերէն բառն է: Չուղեցի աւելի շարունակելը. չէի ուզում քացատրել, թէ ինչպէս է այդ գարմանալի:

«Նա շատ ժամանակ չի ունեցել» - ասաց մայրս: Նորից հաւաքեց կապոցը, դրեց տեղը, միւս բաների մօտ, որոնք պահում էր:

Չմտանք, մի Կիրակի երեկոյեան ես գնացի քայլելով դէպի հանրային գրադարանը եւ շրջեցի ամէն կողմ, մտածելով բոլոր գրքերի եւ բոլոր ուրիշների մասին, որոնք որեւէ գրուած բան ունէին: Արդեօք նրանց գրուածքները աւելի լա՛ւ էին, քան հօրս գրուածքները: Լաւ, ի հարկէ որոշները լաւ էին. բայց մեծ մասամբ լաւ չէին. շատերը դրանցից միայն վերջացած էին. իւրաքանչիւր գրող բաւական ժամանակ էր ունեցել եւ անսուք էր կերպացնել դրանք, բայց այնքան հասողակար էին, որ չնայած գրքերի մէջ էին եւ որոշակի. հանրային գրադարանի դարակներին վրայ, ո՛չ ոք չէր կարողում դրանք: Լաւ, մէկը կարողում էր հօրս գրուածքները, այլ ես էի:

ՌԻՒՆԸՄ ՍԱՐՈՅԵԱՆ

(Հատուած՝ «Ահա եկաւ, ահա գնաց...») հատորէն»





ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԷԶԻ ՀԱՐՑԱՐԱՆԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

- 1) ա.- 21 Յունիսին
բ.- 20րան ընթացքին
2) Մալթա, Սիկիլիա
3) Ա.- Ֆեթա, պանիր: Բ.- Սուսաքա, փուռին մեջ
եփուած ձաշ: Գ.- Ռեցիմա, գիմի: Դ.- Սիրթաքի, պար:
Ե.- Օմեկա, գիր:
4) Վերսայ, Սախտակ Տուր, Ալիամարան:
5) Մարթո Փոլո - Իտալիա, Շիֆոլ - Հոլանտա, Շարլ
Տը Կոլ - Ֆրանսա, Հիթրո - Անգլիա, Ճ. Ֆ. Բենետի
- Սիացեալ Նահանգներ:
6) Նորվեկիա, Գերմանիա, Ճափոն, Սեուտական
Արաբիա:
7) Սիկկիմալուր:
8) Ա.- Նեղոս, Բ.- Դեղին գետ, Գ.- Բոլորատո, Դ.-

- Գանգու, Ե.- Ամազոն:
9) Ա.- Ալպեան, Երոպա: Բ.- Էլբերտ գագաթը,
Ասիա: Գ.- Ուրալ, Երոպայի եւ Ասիայի սահմանին
վրայ: Դ.- Քիլիմանճարո, Ափրիկէ:
10) Ա.- Ապրիլինները, Աւստրալիա: Բ.- Փափու-
ները, Նոր Կիւնտ: Գ.- Մարտինները, Նոր Զելանտա:
Դ.- Պոչիմանները, Ափրիկէ: Ե.- Խմերները, Բամ-
պոտիա:
11) Կանաչ ծովը:
12) Ա.- Պեղծաք, Հրիստային ծով: Բ.- Սպանիա,
Միջերկրական ծով: Գ.- Լեհաստան, Պալթիք ծով:
Դ.- Իսլանտա, Կրիմեյն ծով:

ՍԱԿԱՐԱՆ

Table with 2 columns: Item Name and Price. Includes items like 'Պէյրուի սակարանին մէջ օտար դրամանոցներու փակման սակագները' and 'Սուրիական թղթակիր'.

Table with 2 columns: Item Name and Price. Includes items like 'Անգլիական մէկ ոսկի', 'Իրանեան մէկ ոսկի', 'Օսմանեան մէկ ոսկի'.

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱՆԵՍԱՆՆԱՆ ՀԵՌ. 01-252852

ՆՅՈՒՆԻՍ ԿՐԵՆԱՆ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)
Տարաք մը ծանր աշխատանք կատարել էտք, այ-
սօր ընդհանուր հաշիւ մը պիտի ընէք ձեր կատարած
գործունէութեան, գոր աւարտին հասցուցած էք: Այ-
սուհանդերձ յառաջիկայ ամիսներուն համար լուսա-
տես չէք:
ՅՈՒՆԻ (21 Ապրիլին 21 Մայիս)
Եթէ այսօր որոշում մը պիտի տար ձեզի հետ ապ-
րող անձերու հետ, պիտի ըլլաք լաւ տրամադրութեան
մէջ: Անոնք պիտի համոզուին ձեր համոզիչ խօսքե-
րուն եւ պիտի հետեւին ձեր տեսակետին:
ԵՐԿՈՒՆԻՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս)
Եթէ մտահոգ էք ձեզի մօտիկ անձի մը առողջու-
թեամբ, ապահով եղէք, որ շուտով այդ մասին պիտի
ստանաք բազալեթական եւ դրական լուրեր: Օրը բարի
է:
ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսին 23 Յունիս)
Վիճարանութեան մը ընթացքին ձեր խօսակցները
պիտի ընդդիմանան ձեր տեսակետին, ինչ որ գէշ պի-
տի ազդէ ձեր վրայ: Բայց այս հարցը անձնական
խնդիր մի ցկատեք, որովհետեւ ընդհանրական հարց
մըն է այդ:
ԱՌԻԻԾ (24 Յունիսին 23 Օգոստոս)
Փոքր չափի մարգածե մը վնաս չի տար ձեզի, ընդ-
հակառակն, ձեզի կու տայ նոր փորձառութիւն, նոյն-
պէս օգուտ պիտի բաղդե անկէ: Հոգ տարէք ձեր մարմ-
նին:
ԿՈՅՍ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր)
Ձեր շրջապատին կամ ձեր գաւակներուն հետ ան-
կեղծ վերաբերում պիտի ունենաք, ինչ որ պիտի գնա-
հատուի ձեր ընտանիքին մէջ: Ձեր յարաբերութիւննե-
րը պիտի դիւրանան այսուհետեւ: Անկեղծութիւնը
միշտ օգտակար է:
ԿՇԻՌԻ (24 Սեպտեմբերին 23 Նոյեմբեր)
Պիտի մերժեք մաս կազմել ընտանեկան հաշի մը,
բայց այս մեկուսացումը սուղ պիտի արժէ ձեր վրայ,
որովհետեւ պիտի մեղադրեն ձեզ ամէն կողմէ:
ԿԱՐԻՃ (24 Նոյեմբերին 23 Նոյեմբեր)
Բարեկամ մը, գոր շատ վստահելի կը ցկատեք, այ-
սօր ձեզի պիտի փոխանցէ իր մէկ գաղտնիքը, ամե-
նայն վստահութեամբ: Այս սերտացումը առաւել պի-
տի մօտեցնէ ձեզ իրարու:
ԱՂԵՂՆԱՌՈՐ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր)
Պետք է դատարան ըլլալիք ճշտուէն, այսինքն՝ պա-
րապ ժամեր չունենալ: միայն գուարանալ չ'ըլլաք,
նաեւ կայ աշխատանք: Եթէ իրապէս ինչացի էք, պետք
է գործընթացը ձեր դրամապահակին:
ԱՅՑԵՂՁԻՒՐ (22 Դեկտեմբերին 20 Յունուար)
Պիտի գուարանաք ձեր հրապարակը: Ոմանք պիտի
հետեւին ձեզի, պիտի գնահատեն, ինչ որ պատիւ մը
պիտի ցկատեք: Օրը բախտաբեր է: Ծարուակեցեք ձեր
ճամբան նոյն ձեւով:
ՄՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարին 19 Փետրուար)
Պիտի կարեւոր դուրս գալ այն ծրագրուած աշխա-
տանքին, որ կարեւոր էր ձեզի համար: Ինչ բանի որ
ձեռնարկէք պիտի յաջողի այսօր: Օրը նպաստաւոր է:
ՁՈՒԿ (20 Փետրուարին 20 Մարտ)
Վերահաստատեցէք հին օրերու այն կապը, գոր ու-
նեցած էիք այժմ աչքէ հեռու անձերու հետ: Ձեր վե-
րագտնումը պիտի ըլլայ փառաւոր ու հետաքրքրական:

ՕՐԱՏԵՏՈՒ

ՓԱՌԱՏՈՐ / ՅԱՌԵԱԿԱՆԿԵՒ / ԶԲՕՍԱՇՐՁՈՒԹԻՒՆ

ՊԱՍԼՊԵՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ՝ ԶՈՒԹԱԿԱԿԱՐ ՖԱՊԻՕ ՊԻՈՆՏԻՒՄԻ ՄԻԱԿ ԵԼՈՅԹՈՎ



1997ին իր «վերա-
բացումն» ի վեր
Պալպեքի Միջազ-
գային Փառատօնը
տարուէ տարի
կ'աւելցնէ իր մատու-
ցած յայտագիրնե-
րուն թիւը, միշտ ալ
նախաձեռնողի միջո-
ցով անոնց գե-
ղարուեստական
բարձր որակին եւ
անոնց մէջ հոշակա-
ւոր արուեստագէտ-
ներու ներառումին:
Մշակոյթի եւ ժաման-
ցի միջեւ կապ մը
ստեղծելու նպատա-
կով Պալպեքի Մի-
ջազգային Փառատօ-
նը իր այլապէս եւ
հարուստ յայտագի-
րին շարքին տեղ
տուած է Զինաստա-
նի Կայսերական
Կրկէսի յարախա-
ղացներուն: Բնակա-
նաբար փառատօնի
յայտագիրը մեծ մա-
սամբ կը բաղկանայ
դասական արուեստ

կատարէ այս ամբան
իր յայտագիրներուն
բացումը: Բազում
տաճարին մէջ տեղի
ունենալիք այս ելոյ-
թին իտալացի ջու-
թակահարը եւ նուա-
զախումը, որոնք
հանրաձայնօք են վի-
վալտի ստեղծա-
գործութիւններուն
իրենց մեկնաբանու-
թիւններով, Պալպե-
քի հանդիսատես-
ներուն եւ խումբերու
էլոյթներէն, ինչպէս՝
ջութակահար Ֆապիօ
Պիոնտի, Պիպի
«Քարմէն» օփերայի եւ
մանուկներու «Լա Միջ»
րիկ Տը <Օ- Տը- Սէն»
խումբին էլոյթներէն:
Պալպեքի փառա-
տօնը այսօր երեկոյեան
ժամը 8:30ին համաշ-
խարհային հոշակ վալե-
լոյ ջութակահար
Ֆապիօ Պիոնտի եւ
անոր «Երոպա Կալան-
թէ» նուագախումբին
միակ էլոյթով պիտի

ԱՅՍՈՐ

- Պալպեքի փառատօն. ջութակահար Ֆապիօ
Պիոնտի եւ իր «Երոպա Կազմեք» նուագախումբ-
ի էլոյթ, ժամը 20:00ին Բազումի տաճար:
- Սուրի փառատօն. գաժալի երեկոյ, ժամը
21:00ին:
- Տէյր էլ Քամարի փառատօն. բատերական ներ-
կայացում՝ «Ի սը տոն էմէ», ժամը 20:30ին, Տէյր
էլ Քամարի սերայ:
- Ամառնային փառատօն. Մէյթրի երկակի էլոյթ
(դաշնակ եւ ջութակ), ժամը 19:30ին, Պալմանտի
համալսարան:
- Թոնցիկի Միջազգային 4րդ փառատօն, բոու-
ցիկներու նուագախումբին, ժամը 12:00ին, Ժիյէ,
«Պամպու Պէյ»:
- Արկածախնդրական խաղերու փառատօն՝
«Երսքիմ էլտեմըր փարք», Պիլի մէջ, միջեւ

ՕՅԵՆԻՈՅԹ
ՀԱՐԱԹ,
12 ՅՈՒՆԻՍ 2003
ՊԵՅՐՈՒԹ
ԱՐԵՒՈՏ
ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ
ՑԵՐԵԿ՝ 30°C
ԳԻՇԵՐ՝ 22°C
ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝
76%

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆ

- ա) 2003 - 2004 կրթական տարեշրջանի արձա-
նագրութիւնները սկսած են եւ կը շարունակուին
մինչեւ 25 Յունիս 2003, կեսօրէ առաջ ժամը
9:00էն 12:00:
բ) Լրացուցիչ արձանագրութիւնները կ'ամբող-
ջանան Սեպտեմբերի ընթացքին:
գ) Վերաքննութիւնները, մուտքի քննութիւննե-
րը տեղի կ'ունենան 23, 24 Սեպտեմբեր 2003ին,
կեսօրէ առաջ ժամը 9:00էն 12:00:
դ) Վարժարանին սակերը կը մնան նոյնը եւ
ուսումնասիրուած: Կը տրամադրուին զեղչեր, յատ-
կապէս փայլուն արդիւնք արձանագրող աշա-
կերտներուն: Յատուկ դիւրութիւններ կ'ընծայուին
օտար վարժարան յաճախող աշակերտները ըն-
դունելու համար:
ե) Վարժարանը ունի ֆրանսական թերում,
ինչպէս նաեւ փոխադրութեան կարելիութիւն:
զ) Յաւելեալ մանրամասնութիւններու համար,
ճշդուած ժամանակացոյցին կարելի է հեռաձայ-
նել 01 - 261622, կամ հանդիպիլ դպրոց:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԿՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»-ի մէջ ազգային կամ առեւտրական ծանու-
ցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի
ծանուցումին բնագիրը ընթերցի գիրով (հաստատու-
թեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական
թուղթի վրայ, եւ՝ հաստատում) ներկայացնել «Ազ-
դակ»-ի ծանուցումներու գրասենեակը:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԶՈՂՐԱՊ ԺՈՋԷՖ ՊԱՂՃԵԱՆԻ մահուան քառա-
սունցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի Կիրակի, 13 Յունիս 2003, Էջրեֆիէի Հայ
Կաթողիկէ Պատրիարքարանի Ա. Ալեքսանդրեան
Եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00ին:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5485 Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

Table with 10 columns and 10 rows for a 5485 lottery game.

- 1. Վանք:
2. Կեղծ ճարտարա-
բան - Յուրազական անա-
կան:
3. Աճապարանք -
Մթնոլորտային գոլորչի:
4. Խալիֆայական կու-
սակալ:
5. Չայնանիշ - Լիցք -
Որսի կենդանի:
6. Ամուսնալուծում:
7. Երբժշտական չափ:
8. Սիրան Զարիֆեանի
գրչանունը:
9. Անտէր - Ծաղկա-
ման:
10. Սարմէնի երկերէն -
Ոգելից ըմպելի:

ԹԻՒ 5484
ԽԱՉԲԱՌԻՆ
ԼՈՒԹՈՒՄԸ

ԱԶԳԱԿ 50 ՏԵՄՐԻ ԿՐՈՒՄԸ 12 Յունիս 1953




ՆՈՅՆԱՆ ՏԱՊԱՆԻՆ ՇՈՒՐՁ

Ռուսերը Վիլնիւ կամ Կիւյով
շատ նշանակաւոր ուղեգիր մըն է (Ժ.Գ.
դար), որ սակայն Արարտիւն լեռ
բարձրանալ չէ ուզած Նոյեան Տա-
պանը տեսնելու համար, ինչպէս
գրած ըլլալ կը թուի «Լ'Օրոր»-ի աշ-
խատակից մը (Յառաջ, 1 - 6-53):
Ճիշդ չէ նաեւ, թէ Արարտի մօտա-
կայ մէկ վանքին մէջ հիացած է տա-
պանին մէկ թեկոթին վրայ, գոր
հրեշտակները բերած էին:
Միջնադարեան ուղեգիրը Նախի-
ջեանի մէջ հայ եպիսկոպոսի մը
հետ տեսակցութեան մը առթիւ գրած
է հետեւեալը.
«Այս քաղաքին մօտը կը գտնուի
լեռ մը, որուն վրայ, կ'ըսեն անոնք
(հայերը) կը հանգչի Նոյեան Տապա-
նը, եւ երկու լեռներ կան, մէկը մի-
սեն աւելի մեծ, եւ Արարտը կը հոս
անոնց ստորոտէն, եւ հոն կը գտնուի
քաղաք մը, որ Սեմանում կը կոչուի,
այսինքն «ուր» եւ անոնք կ'ըսեն, թէ
այսպէս յորջորջուած է յանուն այն
ուր մարդոց, որոնք Տապանէն դուրս
ելան եւ գայն (քաղաքը) շինեցին
բարձրագոյն լեռան վրայ:
«Տատերը փորած են այս լեռը
բարձրանալ, բայց ոչ որ յաջողած է:
Այս եպիսկոպոսը ըսաւ, թէ մեզնե-
կաց մը կար, որ շատ կը փափաքէր
(լեռը բարձրանալ), սակայն հրեշ-
տակ մը երեցցաւ անոր՝ բերելով Տա-
պանին փայտէն կտոր մը, եւ անոր
ըսաւ, որ այլեւ չ'փորէ: Փայտի այս
կտորը իր եկեղեցիին մէջ կը

ԱՅՍՈՐ 12 ՅՈՒՆԻՍԻՆ

■ 1988- Լեռնային Ղարաբաղի Խորհրդարանը կ'որոշէ շրջանը անջա-
տել Ազրայճանէն, գայն վերամկրտել պատմական իր անունով՝ Արցախ
եւ որդեգրել Ինքնավար Մարզ գործնապէս Դայաստանին միացնելու
բայելը:

# Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



## ԼԻԲԱՆԱՆԵՒԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՅՈՒԹԻՒՆ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԾԻՐԷՆ ՆԵՐՍ

Երիտասարդության եւ մարմնակրթության նախարար Սեպուհ Յովնանեան երէկ նախարարութեան իր կեդրոնատեղիին մէջ ընդունեց Լիբանանի մէջ Գերմանիոյ դեսպանատան ընդհանուր պարզացման գլխաւոր քարտուղար Ռապրթ Ռուտը, որուն հետ քննարկեց մարզական ընդհանուր հարցեր եւ ի մասնաւորի՝ ֆուտբոլի առնչուող հարցեր:

Ռուտ նախարար Յովնանեանը տեղեակ պահեց, թէ մօտերս Լիբանան պիտի ծանանէ գերմանացի մարզիչ Քլաուս Շթրիք, որ Լիբանանի ֆուտբոլի ֆետերասիոնին հետ գործակցաբար չորս շաբթուան տեւողութեամբ մարզիչներու մարզումի ծրագիր մը պիտի ներկայացնէ:

Հանդիպումին աւարտին Ռուտ շնորհակալութիւն յայտնեց նախարար Յովնանեանին, Լիբանան - Գերմանիա մարզական գործակցութեան հանդէպ ցուցաբերած հետաքրքրութեան համար:

## ԵՆՈՒ. Է. ԷՖ. Ա.Ի ՄՐՑԱՆՇԱՐՔԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՓՈՒՍՈՒԻ

Նիոնի մօջ (Զուլիցերիա) իր գուժարած վերջին ժողովէն ետք ԵՆՈՒ. Է. ԷՖ. Ա. ի մարտաւարութեամբ, թէ 2004-2005 եղանակէն սկսեալ, ԵՆՈՒ. Է. ԷՖ. Ա. ի ֆուտբոլի մրցաշարքին պիտի սկսի կիրարկուել խմբակներու դրուժները՝ «Չէմփրընզ Լիկ» մրցաշարքին նման:



Այկըր, որ կը լուսաբանէ ԵՆՈՒ. Է. ԷՖ. Ա. ի նոր ծրագիրները

ԵՆՈՒ. Է. ԷՖ. Ա. ի ընդհանուր քարտուղար Կերհարտ Այկըրը մանրամասնութիւններ փոխանցելով ըսաւ. «Մրցաշարքը պիտի ընթանայ երեք հանգրուանով: Առաջինն, պիտի կիրարկուի Նաքուլի գրուժները, որուն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն 80 խումբեր: Ապա 40 խումբեր պիտի բաժնուին ու խմբակներու: Իւրաքանչիւր խմբակի առաջին երեք զիջքերը գրաւողները պիտի անցնին յաջորդ հանգրուան, որոնց պիտի միանան «Չէմփրընզ Լիկ» մրցաշարքին դուրս մնացած ու խումբեր: Նմանակերու մրցումներուն պարագային երկու դարձի մրցումներ տեղի պիտի չունենան, այլ խումբերը իրարու դէմ պիտի ճակատին միայն մէկ անգամ:

Նախագիւտ, 95 խումբեր կը մասնակցէին ԵՆՈՒ. Է. ԷՖ. Ա. ի մրցաշարքին: 2004-2005 եղանակէն սկսեալ առնցք թիւը պիտի նուազի 80-ի: Մրցաշարքի աւարտին բաժակին տիրացող խումբը յայտարար կատարած պիտի ըլլայ 15 մրցում:

ԵՆՈՒ. Է. ԷՖ. Ա. ի մէկ այլ պատասխանատուն՝ Մայք Լի, այս բարեփոխման անդադրանքով ըսաւ, թէ նոր դրուժները առիթ պիտի տայ, որ այս մրցաշարքին կարգ մը մրցումները լուսաբանուին տակ առնուին եւ դուրս գան «Չէմփրընզ Լիկ» շրջան:

2006 Մոնտիալի անդադրանքով ԵՆՈՒ. Է. ԷՖ. Ա. ի յայտնեց, թէ Գերմանիոյ 13 տոմսերուն համար պիտի պայքարին 51 խումբեր, բաժնուած ու խմբակի: Երեք խմբակներու մաս պիտի կազմեն ու խումբեր, իսկ հինգ խմբակներու՝ վեց խումբեր:

Նշենք, թէ Երոպայի ցամաքամասին 14րդ տոմսը արդէն իսկ ապահոված է 2006 Մոնտիալը հիւրընկալող երկիրը՝ Գերմանիա:

Իւրաքանչիւր խմբակի պարագլուխի դիրքը գրաւողը, ինչպէս նաեւ երկու լաւագոյն երկրորդները պիտի ապահովեն իրենց տոմսը, մինչ մնացեալ վեց երկրորդները պիտի պայքարին մնացեալ վերջին երեք տոմսերուն համար:

## ՍԻԻՔԷՐ՝ ԽՐՈՒԱԾԻՈՅ ԲՈՒՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ԼԱԻԱԳՈՅՆ ՖՈՒԹՊՈՒԼԻՍԵ

Խորնաթիղջ ֆուտբոլի ֆետերասիոնը եւ երկրին մարզական լրագրողները, երէկ վերջին յիսուն տարիներու Խորնաթիղջ լուսագոյն ֆուտբոլիստը ընտրեցին յառաջապահ Տաւոր Սիւքէրը:

35 տարեկան Սիւքէր, որ 23 ֆուտբոլիստներու մէջ ընտրուեցաւ լուսագոյնը, յառաջիկայ տարի իր երկիրը պիտի ներկայացնէ ԵՆՈՒ. Է. ԷՖ. Ա. ի 50րդ տարեդարձին տօնախմբութեան ընթացքին:

69 միջազգային մրցումներու ընթացքին 45 կողմնակաւ Սիւքէր, 1998 Մոնտիալի հանդիսացաւ կոլաբորըր, իր նշանակած վեց կողերով: Ան իր միջազգային ասպարէզը սկսաւ 1991ին:

## ՖՐԱՆՍԱՅԻ ՀԵԾԵԼԱՐՇԱԻ ԾՐԱՎԱԶՔ ՓԵԹԱՔԻ ԱՐՁԱՆԱԳՐԵՅ ԻՐ ՉՈՐՐՈՐԴ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Ֆրանսայի Հեծալարշաւի շրջափակի 6րդ հանգրուանի մրցումը, որ տեղի ունեցաւ երէկ, Նեվերէն՝ Լիոն (230 քմ.) դարձաւ վերջ գտաւ Ֆասսա Պորթուլի իտալացի հեծելանորդ Ալեսանտրօ Փեթաքի յաղթանակով, որ այս պիտի շահեցաւ իր չորրորդ յաղթանակը՝ եօթ օրուան ընթացքին: Ան ծանանման գիծ հասաւ արձանագրելով 5 ծան, 8 վայրկեան եւ 35 երկվայրկեան արդիւնք մը: 2րդ դիրքը գրաւեց աւստրալիացի Պէյտըն Քուր (Ֆէ. Տէ. Ժէօ), իսկ երրորդ դիրքը՝ իտալացի Ֆապրիցիօ Կուիտի (Պիանքի):

Ֆրանսայի Հեծալարշաւի շրջափակի 6րդ հանգրուանի մրցումը, որ տեղի ունեցաւ երէկ, Նեվերէն՝ Լիոն (230 քմ.) դարձաւ վերջ գտաւ Ֆասսա Պորթուլի իտալացի հեծելանորդ Ալեսանտրօ Փեթաքի յաղթանակով, որ այս պիտի շահեցաւ իր չորրորդ յաղթանակը՝ եօթ օրուան ընթացքին: Ան ծանանման գիծ հասաւ արձանագրելով 5 ծան, 8 վայրկեան եւ 35 երկվայրկեան արդիւնք մը: 2րդ դիրքը գրաւեց աւստրալիացի Պէյտըն Քուր (Ֆէ. Տէ. Ժէօ), իսկ երրորդ դիրքը՝ իտալացի Ֆապրիցիօ Կուիտի (Պիանքի):



Փեթաքի (Եւրոնիա) Էյ. 2. Ար. 84



Փեթաքի (Եւրոնիա) Էյ. 2. Ար. 84

Քի, որ Իտալիոյ հեծելարշաւի հեծելարշաւի շրջափակի (ժիւրի) շահած էր վեց հանգրուան, այսպիսով շահեցաւ բոլոր սփրինքները, որոնց մասնակցեցաւ:

Մտորե՛ կէտերու ընդհանուր դասաւորումը:  
1.- ԵՆՈՒ. Է. ԷՖ. Ա. ի Փոսթալ 66 ծան 32" 30"  
2.- ՕՆՍԷ 49" ուշ  
3.- Պիանքի 51" ուշ  
4.- Իպանեպո 1' 35" ուշ  
5.- Քուիք Սթէփ 1' 45" ուշ  
6.- Էյ. ձի. 2. Ար. 1' 57" ուշ  
7.- Քրեւի Ակրիբոլ 2' 04" ուշ  
8.- Թելեքոմ 2' 04" ուշ  
9.- Սի. էս. Սի. 2' 07" ուշ  
10.- Կերոլսթայնըր 2' 10" ուշ  
11.- Վիլի Բալտիլոլա 2' 16" ուշ  
12.- Քոֆիտիս 2' 28" ուշ  
13.- Ֆասսա Պորթուլ 2' 45" ուշ  
14.- Ռապոպանք 3' 02" ուշ  
15.- Ալեպիօ 3' 10" ուշ  
16.- Լը Պուլանժեր 3' 32" ուշ  
17.- Լուսթալթէյ 3' 40" ուշ  
18.- Ֆէ. Տէ. Ժէօ 3' 46" ուշ  
19.- Սայթ 3' 53" ուշ  
20.- Քելլ 4' 14" ուշ  
21.- Ժան Տրլաթուր 4' 23" ուշ  
22.- Լոթո 5' 50" ուշ

## ՌՈՆԱՆՏԻՆԻՈՅԻ ԸՎԱՍՏԱԳԻՐԸ՝ ՏԱԿԱԻՆ ԱՆՈՐՈՇ

Փարիզ Սէն Ժերմէնի նախագահ Յրենսիս Կրէյ յայտարարեց, թէ պրայիլից միջազգային մարզիկ Ռոնալտինիօ, եղանակ մը եւս պիտի մնայ մարզաշարքի կազմին հետ: Յարդ ամէնէն լաւ առաջարկը եկած է Ռէյալ Մատրիտէն:

Ռոնալտինիօյ շրջափակի 6րդ հանգրուանի մրցումը, որ տեղի ունեցաւ երէկ, Նեվերէն՝ Լիոն (230 քմ.) դարձաւ վերջ գտաւ Ֆասսա Պորթուլի իտալացի հեծելանորդ Ալեսանտրօ Փեթաքի յաղթանակով, որ այս պիտի շահեցաւ իր չորրորդ յաղթանակը՝ եօթ օրուան ընթացքին: Ան ծանանման գիծ հասաւ արձանագրելով 5 ծան, 8 վայրկեան եւ 35 երկվայրկեան արդիւնք մը: 2րդ դիրքը գրաւեց աւստրալիացի Պէյտըն Քուր (Ֆէ. Տէ. Ժէօ), իսկ երրորդ դիրքը՝ իտալացի Ֆապրիցիօ Կուիտի (Պիանքի):




Ռոնալտինիօ

Մտորե՛ կէտերու ընդհանուր դասաւորումը:  
1.- Վիքթոր Հիլօ Փեթաք (Քուլմպիա) ԵՆՈՒ. Է. ԷՖ. Ա. ի Փոսթալ 23 ծան 3' 6"  
2.- Լէն Արմսթրոնկ (Մ. Ն.) ԵՆՈՒ. Է. ԷՖ. Ա. ի Փոսթալ 1" ուշ  
3.- Վիլյէպալ Էքիմով (Ռուսիա) ԵՆՈՒ. Է. ԷՖ. Ա. ի Փոսթալ 5" ուշ  
4.- Ճորձ Հինքսփի (Մ. Ն.) ԵՆՈՒ. Է. ԷՖ. Ա. ի Փոսթալ 5" ուշ  
5.- Խոսէ Լուիս Ռու-

## ՆԱԽԱԳԱՅ ԲՈՇԱՐԵԱՆ ԿԸ ՊԱՐԳԵԻՍՏԻԷ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՅԻ ԳՈՐԾԻՉՆԵՐ



Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան «Մովսէս Խորենացի» մետալով պարգևատրեց Հայաստանի Ռոյմպիականի փոխ նախագահ Գագիկ Ծառուկեանը, Հայաստանի Ռոյմպիականի մարզիկներուն աջակցած ըլլալուն եւ այդ:



Փիրէն ներս անոր կատարած աշխատանքներուն համար:

Հայաստանի Մարմնակրթութեան պետական կոմիտէի հիմնադրութեան 80ամեակին առիթով, նախագահ Քոչարեան, Հայաստանի հանրապետութեան նախագահի շնորհակալագիրներով պատուեց նաեւ մարզիկներ եւ մարզիչներ:

Նախագահ Քոչարեան պատուեց նաեւ Հայաստանի ճատրակի ֆետերասիոնի նախագահ Վանիկ Չաքարեանը, անոր շնորհելով Հայաստանի մարզական վաստակաւոր գործիչի պատուաւոր տիտղոսը:

## ՌԻՔԱԱՐՏ ԿԸ ՓՈՐՁԷ ՊԱՐՍԵԼՈՆԱՆ «ՋՕՐԱՑՆԵԼ»

Պարսելոնայի նոր մարզիչ հոլանտացի Ֆրանք Ռիքարտի կազմը զօրացնելուն պատակով մինչեւ շաբթուային պիտի «գնէ» Սփորթինկ Լիպպոնի մաս կազմող փորթուգալից յառաջապահ Ռիքարտօ Սիւքէրը:



Քուրսեմա

Կը կարծուի, որ 19 տարեկան Քուրսեմա, փոխան 7 միլիոն եւրոյի չորս տարուան պայմանագրութիւն մը ստորագրէ Պարսայի հետ:

Խոսքին հինգ հոլանտացիներէն մէկը՝ վեթերան յետապահ Ֆրանք Տը Պէօր խումբը լքելով միացաւ Կալաթասարայի:

Այլ հոլանտացի մը՝ Փաթրիք Քուլիվերթի մինչեւ Յուլիս 17 պայմանաւոր տրուած է կամ իր պայմանագրութիւնը երկարաձգելու եւ կամ խումբէն հեռանալու:

## ԺԵՐԵՄԻ ՄԻԱՅԱԲ ՉԵԼՍԻԻ

Ռէյալ Մատրիտի պատասխանատուները երէկ պաշտօնապէս յայտարարեցին, թէ իրենց ակումբին մաս կազմող քանթրուէրի միջնապահ Ժերմէն յառաջիկայ եղանակին պիտի կրէ Չելսիի շապիկը:

24 տարեկան Ժերմէն, որ տակաւին չէ ենթարկուած բժշկական քննութիւններու, շատ հաւանաբար Սպանիոյ յալոյեանին ապահովէ շուրջ 10 միլիոն եւրոյի գումար մը: Թէեւ անիկա իր մարզիկին համար կը պահանջէ 12 միլիոն եւրօ, սակայն լոնտոնեան կազմը կ'ուզէ անոր փոխանցման համար վճարել 7 միլիոն եւրօ: Վստահաբար, որ այդ գծով յաւելեալ մանրամասնութիւններ պիտի յստականան այս շաբթուայի վերջին:

## ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՒԱՆՅ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՏԵԱՆԸ ՎԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ՊԻՏԻ ԵՆԹԱՐԿԷ ՕՃԱԼԱՆԻ ԴԱՏԸ

Մ Ր Ր Ա Ձ -  
Պ ՈՒՐ Կ, 11  
(Ա Ֆ Փ).- Մարդ-  
կային իրա-  
ւանց եւրոպա-  
կան ատեանը  
Ուրբաթ օր յայ-  
տարարեց, որ  
վերատեսու-  
թեան պիտի են-  
թարկէ քիրտ  
ղեկավար Ապ-  
տիլլյա Օճալա-  
նի դատը: Օճա-  
լան եւ Ալգարա  
պահանջած է  
ին վերատես-  
ութեան ենթարկել  
ատեանին կողմէ  
Մարտին  
արձակուած վճիռ  
մը, որ կը հաստատէր,  
թէ Թուրքիա խախտած է  
մարդկային իրաւունքնե-  
րը՝ արդար դատավարութենէ  
մը պրկելով Օճա-  
լանը: Ատեանը սակայն  
մերժած էր քիրտ  
ղեկավարին կողմէ  
ներկայացուած այլ  
գանգատներ: Օճալան  
եւ Ալգարա՝ իրարմէ տարբեր  
պատճառներով դժգոհ  
մնացած էին վճիռէն: Օճալան  
ներկայիս ցկեանս  
բանտարկութեան  
դատապարտուած է  
Իմրայի կղզիին վրայ,  
որ միակ բանտարկեալն է  
ան: Եւրոպական  
ատեանը յայտարարեց,  
որ հարցը վերատեսութեան  
ենթարկելու նիստ  
մը տեղի պիտի ունենայ:  
Նիստին թուականը տակաւին  
յայտնի չէ:



## ԽՈՒՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԾԱՌԱՅԵՑԻՆ ՄԻԱՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԱՄՐԱՊԵՏԱՆ

Կ'ԸՆԵ ԱՎՅԱՆՏԱՆ

ԹԵՂՐԱՆ, 11 (Ա Ֆ Փ).-  
Անցնող քանի մը օրե-  
րուն ընթացքին տեղի  
ունեցած բողոքի ելույթ-  
ներն ու խռովութիւն-  
ները ծառայած են  
միայն իրանի կրօնա-  
ւորներու իշխանու-  
թեան պօրացման ու  
ամրապնդման, յայ-  
տարարեց նախկին  
նախագահ Հաշէմի  
Ռաֆսանճանի:



Ռաֆսանճանի

Ռաֆսանճանի, որ  
պատգամ մը կու տար  
Ուրբաթ օրուն հաւա-  
քական աղօթքին  
աւարտին, դիտել  
տուաւ, որ վերջին խռ-  
վութիւնները նպաս-  
տած են վարչակարգի  
հպօրացման: Ռաֆ-  
սանճանի «մանկու-  
նակ» որակեց անցեալ  
ամսուան տասնօրեայ  
բողոքի ցուցերը, որոնք

խանդավառած էին  
ամերիկացի պաշտօ-  
նատարներ: Ռաֆսան-  
ճանի ըսաւ, որ ամերի-  
կացիները ողջունած  
էին ցուցերը, հաւատա-  
լով, որ անոնց միջոցով  
Թեհրանի իշխանու-  
թիւնը հասած է իր

վախճանին:  
Ռաֆսանճանի կոչ  
ուղղեց երիտասարդ-  
ներուն շխաբելու եւ  
աւելի զգաստ ու ար-  
թուն դառնալու, որ-  
պէսպի դժուարութիւն-  
ներ չպատճառեն եր-  
կիրին:

## ԱՄԵՐԻԿԱՆ ԾԵՐԱԿՈՅՏԸ ՍՊԻՏԱԿ ՏՈՒՆԷՆ...

Շարունակուած Ա. Էջէն



մի Ֆրէնքս ըսաւ, որ ան-  
խոհեմ է հաւատալ, թէ  
դաշնակից ճակատին դի-  
մագրուած դժուարու-  
թիւնները մէկ ամիսէն,  
կամ երեք ամիսէն պիտի  
զգուշացուց նաեւ մեծ  
անհետանան: Ֆրէնքս նա-  
խտեսեց, որ ամերիկեան  
ուժերը տակաւին երկար  
ժամանակ ներկայութիւն  
պիտի ըլլան Իրաքի մէջ:

Փառելի իր կարգին  
ըսաւ, որ տակաւին յստակ  
չէ եթէ օտար ուժեր Իրաք  
պիտի ուղարկուին օժան-  
դակելու համար ամերիկե-  
ան եւ բրիտանական ու-  
ժերուն: Փառելի յայտա-  
րարութիւնը եմֆազի վրայ  
կու տայ, որ Ուաշինկթըն  
չէ կրցած ապահովել մեծ  
թիւով երկիրներու օժան-  
դակութիւնը: Փառելին  
առաջ սակայն, պաշտպա-  
նութեան նախարարու-  
թիւնը անցնող քանի մը  
օրերուն ընթացքին հաս-  
տատած էր, թէ մեծ է թիւը  
այն երկիրներուն, որոնք  
կ'ուզեն ուժ ուղարկել  
Իրաք՝ օժանդակելու հա-  
մար ամերիկեան ու բրի-  
տանական ուժերուն: Ըստ  
բարձրաստիճան պաշտա-  
նատարի մը՝ աւելի քան 45  
երկիրներ պատրաստակա-  
մութիւն յայտնած են

օժանդակելու:  
Փառելի հաստատեց, թէ  
քանի մը երկիրներ պիտի  
օժանդակեն, սակայն ան  
չտուաւ անոնց թիւը: Ան  
կամ երեք ամիսէն պիտի  
ակնկալու թիւներն ունե-  
նալէ, պնդելով, որ քանի  
այ ըլլայ օժանդակողնե-  
րուն թիւը, հիմնական աշ-  
խատանքը բեռնուած պի-  
տի մնայ Միացեալ Նա-  
հանգներու, Բրիտանիոյ  
եւ պատերազմին անոնց  
գորավիզ կանգնող գլխա-  
ւոր դաշնակիցներուն:

### ՅԱՐԶԱԿՈՒՄԵՐ ԱՍԵՐԻԿԵԱՆ ՈՒՇԵՐՈՒՆ ԴԵՍ

Իրաքի երկու քաղա-  
քայիններ վերաւորուե-  
ցան, երբ բախում մը ար-  
ձանագրուեցաւ դաշնա-  
կից ուժերու եւ իրաքի  
զինեալներու միջեւ: Ամե-  
րիկացի զինուորական  
բանբեր մը ըսաւ, որ զին-  
եալները ձեռնառումներ  
նետած են ամերիկացի  
մար ամերիկեան ու բրի-  
տանական ուժերուն: Ըստ  
բարձրաստիճան պաշտա-  
նատարի մը՝ աւելի քան 45  
երկիրներ պատրաստակա-  
մութիւն յայտնած են

որուն ընթացքին վերա-  
ւորուած են երկու քաղա-  
քայիններ: Ըստ բանբերին,  
վերաւորները կը գրտ-  
նուէին բախումին վայրէ-  
նանցնող ինքնաշարժի մը  
մէջ: Յստակ չէ, թէ վերա-  
ւորները որո՞ւ կրակով ին-  
կած էին:  
Երէկ առաւօտեան կա-  
նուխ ժամերուն, ամերիկե-  
ան ուժեր Ռամատիի մէջ  
բախում ունեցած են զին-  
եալներու հետ: Վերաւոր-  
ներ եւ զոհեր չեն արձա-  
նագրուած:  
Միւս կողմէ, շիի կրօ-  
նապետ մը՝ ալաթոլլա  
Մեհտի Մոտաբեսի, որ երե-  
սուն տարուան աքսորէ  
ետք երէկ Պաղտատ վերա-  
դարձաւ, անմիջապէս պա-  
հանջեց, որ իրաքցիներէ  
բաղկացած ներկայացուց-  
չական կառավարութիւն  
մը կազմուի՝ ջնջելու հա-  
մար Սատտամ Հիւսէյնի  
բռնատիրական իշխանու-  
թեան բոլոր հետքերը:  
Մուտաբեսի ըսաւ, որ փոք-  
րամասնութիւն մը չի  
կրնար իր հակակշիռին  
տակ պահել իշխանու-  
թիւնը, որ պէտք է ներկա-  
յացնէ բոլոր իրաքցիները:

## ՌՈՒՍ ՈՍՏԻԿԱՆՆԵՐ ԽՈՒՋԱՐԿԵՑԻՆ ԵՌՈՒՔՈՍԻ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐԸ

ՄՈՍԿՈՒԱ, 11 (Ա Ֆ Փ).- Ռուս դատախազներ եւ ոս-  
տիկաններ Ուրբաթ օր խուզարկեցին երկիրին քարիւղի  
երկրորդ մեծագոյն ընկերութեան՝ ԵՌՈՒՔՈՍԻ գրասեն-  
եակները, յայտնեց ընկերութեան փաստաթղթերէն մէ-  
կը:  
Աւելի քան երկու տասնեակ քննիչներ եւ դիմակաւոր  
ոստիկաններ ներխուժած են ԵՌՈՒՔՈՍԻ գրասենեակնե-  
րը, որ քննութեան ենթարկած են արխիւները: Փաս-  
տաթղթեր աւելցուց, որ խուզարկութեան արտօնագիր  
չունէին ոստիկաններն ու քննիչները:  
Դատախազները հետաքննութիւններ բացած են ԵՌՈՒ-  
ՔՈՍԻ սեփականատէր 40ամեայ գործարար Միխայիլ  
Խոտորբովսքիի դէմ, որ կը նկատուի Ռուսիոյ ամենէն  
հարուստ անձնակազմութիւնը: Վերջերս, դատախազնե-  
րը արշաւի մը ձեռնարկած են մեծահարուստ գործա-  
րարներուն դէմ:

## ԻՐԱՆԻ ՀԱՐԱԲԱՅԻՆ ՇՐՋԱՆԻՆ ՄԵՋ ԵՐԿՐԱՇԱՐԺ

ԹԵՂՐԱՆ, 11 (Ա Ֆ Փ).- Գիւղացի մը սպաննուեցաւ եւ  
25 ուրիշներ վիրաւորուեցան Իրանի հարաւային շրջա-  
նին մէջ, ուր յաջորաբար երկու երկրաշարժեր տեղի  
ունեցած էին Հինգշաբթի երեկոյան, հաղորդեց «ԻՐ-  
ԱՆ» լրատու գործակալութիւնը:  
Երկրաշարժները, որոնք 5,6 եւ 5,8 աստիճան ռի-  
թըր ուժգնութեամբ էին, հարուածեցին Ֆարս նահան-  
գի Չարենտաշի քաղաքի շրջակայքը գտնուող քանի մը  
գիւղեր: Թէհրանի պատկերասփիւռի կայանը հաղոր-  
դեց, որ առաջին ցնցումը տեւած է 12 երկվայրկեան՝  
շրջանին երկտրականութեան ընդհատուած պատճառե-  
լով: Պատասխանատուներ դիտել տուին, որ տաք օդին  
պատճառով բնակիչներուն մեծ մասը տուներէն դուրս  
էր, երեւոյթ մը, որ նուազեցուցած է զոհերուն ու վիրա-  
ւորներուն թիւը:

**DAY WATER**

Մասնավաճառի դրոշմին  
աստիճաններու գնումի  
պարագային: Կանաչակաթ 13 S.  
Հաստատութիւններու համար  
յապուկ գիրքի դրոշմներ:

RECOMMENDED  
FOR BABIES

Clean & Safe Water  
Under Hygienic Condition  
NATURAL - PURELIGHT - LOW IN SODIUM

Free  
Delivery

19 Litre  
2000L

Approved By Samoya Cool

Mr Jim Keushkerian  
owner

DAY WATER, Tel.: 03/435298

## ՀԵՔԻԱԹ ՀԱՅԱՍՏԱՆ-3 ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԵՉԱԿԻ ՇՐՋԱՊՏՈՅ ԴԿՅԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԴԿՅԻ ԱՐՅԱՆ

8 Սեպտեմբեր 21 Սեպտեմբեր 2003

Շրջապտոյտի  
առաջնորդ  
ՕՆԵԻԿ  
ԳԱՆԹԱՐՃԵԱՆ

ԱՌԹԱՍԱՐ ԸՆԿ. 01/260850.03/586337 ANSER TRAVEL 01/562044.

## ՉԵՉԵՆ ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆՆԵՐ ՄԱԿԻ ՄԻՋԱՍՏՈՒԹԻՒՆ ՄԸ Կ'ԱԿՆԿԱԼԵՆ

ՄՈՍԿՈՒԱ, 11 (Ա Ֆ Փ).- Չէչէն անջատ-  
ղականներ պիտի ողջունեն ՄԱԿի միջա-  
մտութիւն մը վերջ տալու համար բազմամեայ  
տագնապին, յայտնեց Ասլան Մասիատովի  
բանբերը:

Բանբերը ըսաւ, որ չէչէն ղեկավար Մա-  
սիատով կ'ընդունի ՄԱԿի միջնորդութիւնը  
եւ խաղաղութեան լուծումի մը առաջարկը:  
Բանբերը աւելցուց, որ ըմբոստ ուժերը պի-  
տի ընդունին Չէչէնի մէջ փոխանցման  
հանգրուանի ՄԱԿի առժամեայ իշխանու-  
թեան մը հաստատումը, ինչպէս նաեւ կը  
խոստանան գործակցիլ այդ իշխանութեան  
հետ: Բանբերը ըսաւ նաեւ, որ ըմբոստ ուժե-  
րը պատրաստ են նկատի ունենալու Ռու-  
սիոյ ապահովական ու աշխարհագրաքաղա-  
քական շահերու մտահոգութիւնները եւ այդ  
ուղղութեամբ անհրաժեշտ պիշուանները կա-  
տարելու:

Մոսկուայի մէջ բարձրաստիճան պաշտօ-  
նատարներ սակայն անգամ մը եւս մերժե-  
ցին բանակցութիւններու եւ ՄԱԿի միջա-  
մտութեան առաջարկը:

## ԱՐԻԷԼ ՇԱՐՈՆ ԵՒ ՄԱՀՄՈՒՏ ԱՊՊԱՍ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ...

Շարունակուած Ա. Էջէն

ականատեսներուն զինեալ էր: Համասի ղեկավար Ապ-  
տիլազիզ Ռանթիսի դատապարտեց արարքը, շեշտելով,  
որ թիկնապահները, որ եւ չպատճառ չունէին կրակ բա-  
նալու:

Մինչ այդ, Ապպասի եւ Եասէր Արաֆատի միջեւ հա-  
կամարտութիւնն ու տարակարծութիւնները թափ կը  
ստանան: «Հարէց» օրաթերթին համաձայն, Արաֆատ  
Ապպասը ամբաստանած է պաղեստինեան շահերուն դա-  
ւաճանելու յանցանքով: Արաֆատ հարց տուած է, թէ  
Ապպաս ինչպէ՞ս կրնայ կանգնիլ իսրայէլեան դրօշա-  
կին ու Շարոնի մօտ եւ ինչպէ՞ս կրնայ բարեկամաբար  
մօտենալ այդ մարդուն, որուն անցեալը ծանօթ է ամ-  
բողջ աշխարհին: Արաֆատ կ'ակնարկէր Ապպաս – Շա-  
րոն 1 Յուլիսի հանդիպումին, որուն ընթացքին բացա-  
կայ էր պաղեստինեան դրօշակը:

Արաֆատի խորհրդատու Ահմէտ Ապտէլուհաման հեր-  
քեց «Հարէց»-ի մէջ լրջ տեսած տեղեկութիւնները:

Շարոն իր կարգին, կոչ ուղղեց եւրոպացի ղեկավար-  
ներուն հետեւելու Իտալիոյ վարչապետ Սիլվիո Պեր-  
լուսքոնի օրինակին՝ մեկուսացնելով պաղեստինեան  
իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատը, Շարոն  
ըսաւ, որ Եւրոպական Միութիւնը պէտք է զիտակցի, որ  
Արաֆատը մեկուսացնելով եւ Ապու Մազէնի գորավիզ  
կանգնելով՝ արդիւններ կարելի է տեսնել: Իսրայէլա-  
ցի վարչապետը աւելցուց, որ Իտալիա կրցած է զիտակ-  
ցիլ այս իրողութեան եւ երբ Պերլուսքոնի Իտալիայէ ալ-  
ցելեց, տեսակցութիւն չունեցաւ Արաֆատի հետ:

●ՄՕՏԱԻՌԱՊԷՍ ԵՐԵՎԱՆԻ ՎԵՐԵՍՏԱԿԱՆ ԳՐԱՅԻՆ  
ՄԸ ԺԱՆՆԱԿՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ, ԿԱԳԱՅԻ ԻՄՔԱՆՆԵՐԸ  
ՀԱՄԱՐ ԱՊՐԵՆԻՍ ԿԱՐԵՆԻՍԻ ԳՐԱՅԻՆ ԿԱՐԵՆԻՍԻ:

●ԵԳԻՊՏՈՒ ԳՐԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԵԱՆԵՐԸ ԳՐԱՅԻՆ  
ՕՄԱՐ ՄԻԼԷՅՄԱՆ ԿԱՐԵՆԻՍԻ ԳՐԱՅԻՆ ԿԱՐԵՆԻՍԻ:

●ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼԵԻ ԽԱՂԱ-  
ՊԵՐԵՆԻՍ ԿԱՐԵՆԻՍԻ ԳՐԱՅԻՆ ԿԱՐԵՆԻՍԻ:

●ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼԵԻ ԽԱՂԱ-  
ՊԵՐԵՆԻՍ ԿԱՐԵՆԻՍԻ ԳՐԱՅԻՆ ԿԱՐԵՆԻՍԻ:

●ՌՈՒՍԻՆՑ ԳՐԱՅԻՆ ԳՐՈՒՆԵՐԸ ԳՐԱՅԻՆ ԿԱՐԵՆԻՍԻ:

●ՌՈՒՍԻՆՑ ԳՐԱՅԻՆ ԳՐՈՒՆԵՐԸ ԳՐԱՅԻՆ ԿԱՐԵՆԻՍԻ:

●ՌՈՒՍԻՆՑ ԳՐԱՅԻՆ ԳՐՈՒՆԵՐԸ ԳՐԱՅԻՆ ԿԱՐԵՆԻՍԻ:

●ՌՈՒՍԻՆՑ ԳՐԱՅԻՆ ԳՐՈՒՆԵՐԸ ԳՐԱՅԻՆ ԿԱՐԵՆԻՍԻ:

**Balkan Holidays**

TRANSLITEX TOURS

ԴԵՊԻ ՎԱՌՆԱ ՇՐՋԱՊՏՈՅՆԵՐՈՒ

36 ՏԱՐՈՒԱ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ

Varna Summer

245\$ սկսեալ

2եր թիչքները կազմակերպեց մեր  
սեփական օդատարով  
նուազագոյն սակեր  
245\$ էն սկսեալ  
(ներառեալ շրջապտոյտին  
հիմնական ծախսերը)

Balkan Holidays

VARNA EXPERT NO. 1  
Look after No. 1. Let No. 1 Look after you.  
CORNICH MAZRAA WAKF ROOM CENTER - BANK AUDI  
TEL.: 1/304553 - 304563 FAX: 9611/310424 BEIRUT - LEBANON